This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.

+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.

+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.

+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

GRAD
EREN
625
BUHR

B 1,212,171

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ն Ա Խ Ն Ե Ա Ց

ՄԱՄԲՐԷ ՎԵՐԾԱՆՈՂ

Mambre, Vertsanogh
Mambrei Vertsanoghi chark
506

ՄԱՄԲՐԷԻ

ՎԵՐԾԱՆՈՂԻ

79 R

ՃԱՌՔ

Գրադարան
ԳՐԻԳՈՐ ԱՓԱՃԵԱՆԻ
Կարգաթիւ 538



Ի ՎԵՆԵՏԻԿ—ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ
1894

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

rad
EREN
625
BUHR

GRAF
ERFV
635

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ Ք. ՓԱՇԱՃԵԱՆ
Կարգաթիւ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԱՌԱՋՆՈՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ՄԱՏԲԵՆԻ վերծանող կոչեցելոյ կրսեր եղբօրն Մովսեսի խորենացւոյ եւ աշակերտակցին, երեք եւեթ ժամանեցին մինչեւ առ մեզ ճառք, մին ի ՅԱՐՈՒԹԻՒՆ ՂԱԶԱՐՈՒ, եւ երկու այլ ի ԳԱԼՈՒՍՏ ՏԵԱՌՆ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ։

Այլ սոքա երկու յետինքս յոյժ ստորեւ են քան զառաջինն, զորոց եւ չկրի ինչ հակառակութիւն. եւ երրեակ են նօտրագիր օրինակք սոցա առ մեզ, մին գրեալ ի ՌՁՁ թուականին, եւ միւս երկուքն անթուականք։ Մնայ մեզ զառաջին ճառն՝ զՅարութեանն Ղազարու՝ փոքր ինչ ի քննին առնուլ։

Վէպք իրացն յարութեան Ղազարու զքազում եւ զմեծամեծ հանճարաց զաշխոյժ եռանդեան բորբոքեալ են ի բան եւ ի գիր՝ ի հնումն առ Հարս եկեղեցւոյ. նմին իրի վեց այլ եւ այլ օրինակագրաց մնուամբք ճառս գտանեմք ի Յարութիւն Ղազարու ասացեալ. յորոց առաջինն՝ Եւսեբեայ եմեսացւոյ, երկրորդն Հիպողիտեայ բոստրացւոյ, երրորդն Թէոփիլէի, չորրորդն Ոսկեբերանի, հին-

գերորդն Մամբրէի վերծանողի ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱ-ՆԻՆ ՄԵԿՆՈՒԹԵՆԷ ԱՍԱՑԵԱԼ, եւ վեցերորդ առանց ու-րուք անուան։ Այս խուռն յաճախութիւն վարդապետու-թեանց ի մի եւ ի նոյն բան՝ շփոթս արկեալ է եւ յա-նուանս շարագրողացն զնոսին. մանաւանդ զի չեւ է հա-սեալ տակաւին ի ձեռս մեր եւ ասացեալ Մեկնութիւն Մամբրէի յԱւետարանն Յովհաննու։ Այլ այս որպէս եւ է, մեր ութն օրինակք էին առաջի՝ յորոց զտպագրութիւնս զայս արարաք։ Երկուք ի վերնագրին ունէին զանուն Ոս-կեբերանի, այլ ի յոյն մատեանս վարդապետիս չգտաք զայն, որ եւ նօտրագիր են եւ անթուական. այլ երկուք զանուն Մամբրէի, մին նօտրագիր գրեալ ի ՌՋՁ թուա-կանին, եւ միւսն բոլորգիր անթուական. եւ երեք այլ ա-ռանց ուրուք անուան, յորոց երկուքն բոլորգիր, մին գր-րեալ ի ՌԿԷ թուականին, եւ միւսն անթուական, եւ եր-րորդն նօտրագիր անթուական։ Ի սոցանէ որ զանուն Ոս-կեբերանի եւ Մամբրէի ունէին՝ միաբան էին ընդ իրեարս, նմին իրի եւ մեք յանուն եւեթ Մամբրէի տուաք ի լոյս. այլ հաւատարմութիւնս մեր ոչ ներէր զհաւաստիս իրացն աներկբայ թողուլ աստէն։ Իսկ անանունն, զոր եւ գր-տաք ի մատենի ուրեմն Տօնամամակ կոչեցելոյ, զի ուրեք կարի անմիաբան էր ընդ այլոցն, վասն որոյ ուրոյն եւ զնա տպեցաք զկնի առաջնոյն։

Այս են բանք առաջին հրատարակողացս, յամի 1832։

Հնագոյն քան զայդ ամենայն յիշեալ օրինակս՝ է հրա-շափառ եւ հսկայաչափ Տօնականն Առաքելոց վանաց Տա-րօնոյ, գրեալ ի սկիզբն ԺԳ դարու (ՈԾԴ=1205). յորոյ հոյլս իմաստնափայլ սոփերացն յեռեալ է եւ այս ճառ, մակագրեալ յանուն ԵՂԻՇԷԻ՝ աշխարհածանօթ մերոյ հեղի-նակի, որում եւ վայել իսկ է. այլ կուռ եւ սեղմ ճարտա-սանական ոճովն՝ հզօրագունի եւս՝ քան քաղցրաբան իւ-րում գրչի. եւ ոչ անճահ լինել վկայելոյն յոսկեղինիկ թարգմանիչս մեր՝ Ճարտասան եւ Վերծանող Մամբրէի,

ըստ ընծայութեան առաջնոցն ոմանց օրինակաց։ Ընդ սոսին եթէ հմուտ ոք դպրութեանց մերոց՝ բաղդատիցէ զայժմու հրատարակեալս՝ ըստ տարօնեան գաղափարին՝ ընդօրինակելոյ վաղ ուրեմն հաւատարմութեամբ ի մերոյս Հ. Ներսիսէ Սարգիսեան, ոչ միայն գտցէ ընտիր ընտիր ասացուածս, այլ համօրէն նորաձոյլ սքանչելի ճառ քաջարուեստ ճարտասանի, վեհագոյն գոգջիր բնաւից ցարդ ծանուցելոց ի դպրութեան մերում, եւ անվեհեր ի մրցել ընդ դասագիր Հարց Հելլենաց եւ Հռոմոց։ Քաջ իսկ զառաւելութիւն սորին ցուցցեն եւ այլազան ընթերցուածք հին օրինակացն, ներքոյ գրեալք ի ծանօթութիւնս, յորս յաւելաք միւս եւս պատուական եւ մերձաւոր հետեւող նորոյս ընտրելոյ, այն է համախմբեալ ճառն ի նոյն խորհուրդ Յարութեան Ղազարու՝ ի բանից Հարց, ձեռամբ ճարտարի Յովհաննու Եզընկայեցւոյ, յիւրում Տօնապատճառի, գրելոյ յիւրմէ իսկ կամ առ իւրեւ. յորում յեռեալ է մեծ մասն ճառիս, առանց նշանակելոյ զանուն հեղինակին ի լուսանցս, որպէս զայլոցն ոմանց Հարց սրբոց։ Որ ինչ բան այլայլեալ կամ ոչ հարազատ կարծի մեզ առ սմա, կարգի ի ստորեւն ***Եզնկ.*** նշանակաւ, իսկ որ ի բնագրին՝ այն է Տարօնացին՝ Տ տառիւ։ ***Այլք*** նշանակեն զօրինակս յիշեալս ի յառաջաբանին հնում։

Ի ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՂԱԶԱՐՈՒ

ԱՄԵՆԱՅՆ նշանք աստուածայինք Տեառն մերոյ՝ կարեւորք են. և են որ ե՛ւս կարեւորք. և [1] մասնաւորք՝ ունին զերկնաւոր յուսոյն մխիթարութիւն։ Այլ ուր զյարութիւն մեռելոց տեսանես [2], ի ձեռն մասնաւոր յարութեանն՝ զբոլոր յարութեանն մասունս հաւատասջիր, զառ ի յԱդամայ մինչեւ ի գալուստն երկրորդ։ Զի է ինչ որ ըստ բնութեան լինելութեան վարեցաւ Տէր մեր, և է ինչ որ ըստ տեսական արուեստից։ Բնութեանս մերոյ սկիզբն՝ ի գլխոյ անտի առնու լինել մարդ. իսկ ստուերագիր նկարիչք՝ զպատկերս թագաւորաց՝ նախ յոտիցն ձեռնարկեն, և զբոլոր անդամս մարմնոյն ներքուստ ի վեր ձեւացուցանեն. հուսկ յետոյ զդէմս երեսացն նկարագրեն. և ապա ի ձեռն գլխոյն բոլոր կենդանին ճանաչի՝ թէ ո՛վ իցէ։

Ըստ այսմ օրինակի սկիզբն արար Տէրն մեր՝ ի ջրոյ գինի, և ապա զամենայն խեղութիւնս անդամոցն էած յառողջութիւն [3], ուր ոտիւք, ուր ձեռօք, ուր ականջօք, և զայլն ամենայն. և զդեւս ընդ նոսին հալածականս արար ի մարդոց անտի։ Իբրեւ եկն մերձեցաւ ժամանակ կատարման նորա,

1. Այլք. որք մասնաւոր ունին։
2. Այլք. յորժամ զյարութիւնն տեսանես։
3. Չիք ի Տ. յառողջութիւն։

կատարումն նշանաց՝ զյարութիւնն Ղազարու ե֊ ցոյց. որպէս թէ և ըստ Յովհաննու աւետարանին՝ յետ այսր սքանչելեաց՝ այլ եւս՛ ինչ վասն նշանաց ոչ ճառագրէ. այլ և անդստին իսկ ի ճառս խաչե֊ լութեանն մտանէ։ Այպա եթէ զօծումն ոտից նորա ասիցես ի Մարիամայ, թողութիւն մեղաց չնորհի՝ և ոչ խեղութիւն անդամոց բժշկի. որպէս և յա֊ ւանակին ակնարկութիւնն՝ սրբութիւն հեթանո֊ սաց, և հնչումն տղայոցն՝ վկայութիւն մարգա֊ րէական ձայնիցն։ Եւ բազում այլ մեծամեծ իրք ի յարութենէ անտի Ղազարու մինչեւ ի խաչելու֊ թիւնն և ի լուսաւոր յարութիւն Տեառն մերոյ, որպէս և զբազումս էած ընդ իւր ի մեռելոց՝ և եցոյց բազում մարդկան, աւետիս տալով վասն տիեզերական յարութեանն, իրագործութիւն սաի, այլ ի համար առաջին նշանացն ոչ մտանէ [1], ըստ Յովհաննու. զի առ Ղազար սահմանեցաւ նշանա֊ գործութիւնն, իբրեւ գլուխ ի վերայ կենդանւոյ. իբրեւ պատկեր ի մարդւոյ՝ զթագաւորական պա֊ տիւն ունին ի միութիւն կենդանոյն։ Էր անսահ֊ ման և սահմանեցաւ. թուական ամօք եկն ի կա֊ տարելութիւն, և մասնաւոր նշանագործութեամբք՝ սահմանեցաւ առ ի յարութիւն սիրելւոյն. և ապա տարաւ եհան յանքաւութիւնն, և յուսով առ յապա՝ զբոլոր աշխարհս։

« Անդ [2] էր, ասէ, հիւանդ ոմն Ղազար անուն, ի Բեթանիայ ի գեղջէ Մարեմայ և Մարթայի »։ Յի֊ սուս յայնկոյս Յորդանան գետոյ՝ ուր Յովհաննէս զմկրտութիւնն առնէր, փարէր զտեղեօքն, զբոլոր անապատն որսայր ի կենդանութիւն։ Առաքեցին առ նա քորք նորա և ասեն. « Տէր, ահաւասիկ զոր դուն սիրէիր հիւանդացեալ է և անկեալ դը֊ նի »։ Լուաւ զգոյժ հիւանդին, և սահմանեաց զիշ֊ խանութիւն մահու. քարոզեաց վասն փառացն Ա֊

1. Այլք յաւելուն. բերկրանք բարձրագոյն է մխիթարեամբ։
2. Այլք. Անդ։

տուծոյ, զի փառաւորեսցի որդի Աստուծոյ ի նմա. զտեղի կալաւ. աւուրս երկուս. Թոյլ ետ մնանել աւազակին ի տուն սիրելւոյն. եմուտ ապականագործն և արար խռովութիւն ըստ կամաց իւրոց: Արբանեկին Մարիամու ոչ ինչ արար պատասխանի յայտնապէս, ոչ ինչ զերթալոյ և բժշկելոյ, և ոչ զչերթալոյ և անփոյթ առնելոյ: Զանուն հիւանդին ասացին, զփառացն անուն լուան և գնացին. տըրտում ըստ տեսակին, և խնդութեամբ՝ որ ոչն երևի ի միջի*: Թաղում աղերսանօք յղեցին և մեծամեծ թախանձանօք աղաչեցին, և զօր ըստ օրէ ընդունելութիւնն յիշեցուցին. ոչ կարծ ի կարծ կոչեցին, և ոչ երկբայութեամբ հաւատացին ի յարուցիչն ամենեցուն, բայց մարդկաբար փութացին՝ մինչեւ հիւանդին վճարել[1] ի կենաց իւրոց: Քանզի մինչդեռ յախտից մարմին[2] բնակեալ է հոգին, յաճախագոյն սայթաքէ քան եթէ հաստատուն կայ. որպէս և Հոգին Սուրբ ասէ ի բերանոյ Դաւթի. «Յիշեա զի մարմին են սոքա. հոգի որ ելանէ՝ այլ ոչ եւս դառնայ»: Ոչ Աստուած մոռանայ և[3] զմոռացեալսն վերստին յիշէ. զբնութիւն բարուց նոցա երկրորդէ. որպէս և Պաւղոս զայլոց թերահաւատութիւն իւրով լեզուաւն երկրորդէ. «Զիա՞րդ, ասէ, յառնեն մեռեալք և կամ որո՞վ մարմնով գայցեն»: Տարժող հոգին ելեալ գնացեալ է. ամենայն մարմին ընդ ապականութեամբ անկեալ. ոչ միայն քակտումն յօդից՝ այլ և գոյացութիւն մարմնոյն ի հողոյ բնութիւն դարձեալ[4]: Վասն այնորիկ հարկեցաւ առակօք սերմանեացն՝ որ մեռանին և կենդանանան՝ աճել ըղնոսա ի հաւանութիւն յարութեանն[5]: Ըստ այսմ

* Աստի սկսանի Երզնկացին միահետ արտագրել զՃառս:

1. Այլք. մինչ չեւ հիւանդն վճարեալ կամ վախճանեալ էր:
2. Այլք. յախտալից մարմինս:
3. Երզնկ. և ոչ. այլք՝ այլ և:
4. Պակասէ ի Տ. այս մասն. ոչ միայն... դարձեալ:
5. Երզնկ. ի կենդանութիւն:

օրինակի և քորքն Ղազարու ալէկոծէին ի միտս [1] իւրեանց. իբրեւ յԱստուած հաւատացին, և որպէս զբժիշկ ճարտար առ հիւանդն կոչէին։ Ցղեաց առ նոսա բան միջնորդ, յերկուց կողմանց դիմառութիւն ցուցանել [2]։ Հեռաստանէ ընկալաւ զերակս հիւանդին, մանր զննեաց, և ճշմարտիւ զպատմութիւնն ասաց [3]. « Այս հիւանդութիւն չէ ի մահ՝ այլ ի քուն և յընդոստումն, [4] և վասն փառացն Աստուծոյ ». ընդոստմամբ Աստուած փառաւորի, ի նմին փառս և Որդի ցնծացեալ բերկրի։

Եկին առաքեալքն Մարիամու, և ոչ ինչ կարացին պատմել զյայտնութիւն բանիցն Տեառն։ Գոռոզացաւ [5] և հպարտացաւ մահ, եւ կատարեաց զկամս իւրոյ չարութեանն։

Ասէ Տէրն մեր ցաշակերտսն իւր. « Եկայք երթիցուք ի Հրէաստան »։ Եկն և անդ երկիւղ մահու, և չարագոյն եւս տագնապեաց զնոսա՝ քան զքորսն Ղազարու. « Տէր, ասեն, այժմ Հրէայքն խնդրեն զքեզ սպանանել. և դու դարձեալ անդրէ՞ն երթաս »։ Երբեր առաջի նոցա զճառս լուսոյ. « Որ գնայ ի տուընջեան [6] ոչ գայթագղի». յայտ արարեալ թէ որ երկնչի ի մահուանէ, ոչ տեսանէ [7]։ Մի՛ ինչ այժմ զմարմնաւոր աչացդ տեսիլ լսեր [8], այլ տեսումն վասն երկիւղի մարդկան։ Եւ ամենայն կենդանեաց տեսակք [9] զգուշանան ի հնարագունիցն, հանապազ զօղելով և սալարելով [10], զի դառնու-

1. Այլք. ի սիրտս։
2. Այլք. Ցղեն առ նա բան միջնորդի. յերկուց կողմանց դիմառութիւն ցուցանէ։
3. Այլք. արար։
4. Տ. չունի ընդոստումն. յոր յաւելուն այլք. Քուն լինելովն մարդիկ ունեար լինին, երէ սիրելեաց իւրոց ոչ կարաց օգնել։
5. Տ. Գոռացաւ։
6. Այլք. լուսով։
7. Այսպէս և Եզնկ. այլք յաւելուն՝ զնա։
8. Այլք. ասեր (՞)։
9. Այլք. այս տեսումն վասն երկիւղի է և մարդկան և ամենայն կենդանեաց. վասն զի տկարքն զգուշանան ի հզօրագունիցն։
10. Այլք. սարսելով զդառնութիւնն։

թեան կեանս աշխարհիս կատարելով, զհաւատոյ տեսաւորութիւն ասեմ. սմա ակնկալեալն՝ և յանձնարկելն ցուցանէ[1], և զառ ի յապայն առժամն տեսանէ[2]. և թէ զայնպիսի տեսաւորութիւն ի յոգիս ոչ ստացեալ ունիցի, եթէ միջօրէի գնայ՝ գայթագղի, և խաւար հանապազ ընդ նմա իսկ է։ Որպէս զառաքեալսն Մարիամու՝ իբրեւ գուժկանս՝ ունայն մտօք արձակեաց անդրէն, նոյնպէս և զաշակերտսն այսր անդր տարաբերեաց, և ոչ կամեցաւ զյայտնութիւնս խորհրդոյն ցուցանել նոցա։ Վասն է՞ր[3]. միանգամ և երկիցս տեսեալ զնշանս յարութեան և ոչ հաստատեցան[4], փոխանակ զի ոչ յաղթեալ՝ զանձինս աներկիւղս ունէին[5], զնա եւս երկնչատ ուսուցանէն։

« Այժմ, ասեն, Հրեայք սպառնային սպանանել զքեզ, և դու անդրէ՞ն երթաս»։ Սպանանելն և մեռանելն նոյն է. զերկոտասանամեայ դուստր քահանային մեռեալ՝ յարոյց, նոյնպէս և զմիամօրն ի Նային քաղաքի՝ կալաւ և կանգնեաց ի դագաղացն։ Որ զմի մեռեալ կարէ կեցուցանել՝ նա և զբազումս, և եթէ զայլոց մահս հալածական արար, եւս առաւել զձերդ. զի՞ այդչափ զահի հարեալ էք և դողայք. ապաքէն յորժամ և է ելանելոց էք[6] ի մարմնոյ այտի. արդ ո՞չ հանապազ ընդ այդ բան կրթեսցուք[7], թէ «Մի՛ երկնչիք յայնցանէ որ սպանանեն զմարմին, ոչ կարեն սպանանել զոգի». այլ որ կարող է միանգամայն զհոգի և զմարմին առ հասարակ թափել ի մահուանէ[8]։ Եւ ի Թաբովր լերինն զդոյն բարբառ լուայք ի Հօրէ. « Դա է իմ

1. Այլք. որ զանճկացեալն՝ յանձնարկեալն կամ յանձնարկելն ցուցանէ։
2. Այլք. ցուցանէ կամ գուշակէ։
3. Այլք. զի։
4. Այլք. հաւատացին։
5. Այլք. փոխանակ զանձինս աներկիւղս ունելով։
6. Այլք. Ո՞չ ապաքէն ելանելոց էք։
7. Այլք. ո՞չ համապազ ընդ այդ բան կրթեցարուք։
8. Այլք. Դա միանգամայն զոգի և զմարմին թափէ ի մահուանէ առ հասարակ։։

որդի սիրելի, դմա՛ լուարուք»․ դուք փոխանակ նմա լսելոյ՝ հրամանատուք կամիք լինել․ յայտ է, թէ և զՂազարու յարութեանն խորհուրդ ի վեր հանեալ էր ձեզ, դուք ոչ հաւատայիք։ «Մի՛ երթար ի Հրէաստան, զի սպանանել կամին զքեզ»։ Վասն նոցա տկար մտացն՝ այսր անդր տարաբերեալ զմիտս բանին[1], զի սակաւիկ մի կրթեսցէ զլսելիս նոցա․ մերթ ասէ, «Այս հիւանդութիւն չէ՛ ի մահ»․ դարձեալ ասէ, «Վասն փառացն Աստուծոյ, զի փառաւորեսցի ի նմա որդի Աստուծոյ»։ Հիւանդութիւն անվրէպ ի մահ էր, և փառքն ի մահուանէն յորդեցին ի տեսանելիս ամենայն թերահաւատ ժողովրդեանն, յամենայնի՝ առաւելապէս յայնժամ զբանիւք արար զաշակերտսն, մինչեւ մեռեալն թաղման գերեզմանի վիճակեցաւ[2]։

Ապա յետ այսորիկ ասէ․ «Ղազար բարեկամն մեր ննջեաց, այլ ես երթամ զի զարթուցից ըզնա»։ Ո՜ Տէր, իբրև ընդ մանկունս խօսիս, և որպէս տղայոց կաթն ջամբես․ մայրաբար ծնանիս և դայեկաբար սնուցանես, և վարդապետաբար ուսուցանես, և զտգիտութիւն նոցա՝ իմաստութեամբ ծածկես։ Ե՞րբ էիր սննեկապան դու Ղազարու, զի երթաս զարթուցանես զնա ի քնոյ․ երկուց աւուրց գնացս է հեռաւորութիւն ճանապարհիդ․ մինչեւ երթաս դու՝ Ղազար համակ ի քո՞ւն կայցէ․ միթէ ի մանրագործա՞ց թմբրեալ իցէ, կամ ի սաստիկ անապակա՞ց զմբրեալ իցէ․ կամ ո՞յր ուրուք ի մարդկանէ[3] զչորս տիւ և ըզչորս գիշերս անհատ ի քուն լինիցի․ և արդ դու երթաս զարթուցանես զնա։ Քոյրք նորա որ յղեցին առ քեզ փութապէս զարբանեակսն, նոքա ընդէ՞ր ոչ զարթուցանեն զնա․ վասն քնոյ նորա առ քեզ ոչ յղեցին, այլ վասն մահաբեր ախտին ստէպ աղաչեցին զքեզ՝ զի եկեսցես և բժշկեսցես։

1. Այլք․ զզօրութիւն բանին։
2. Այլք․ վճարեցաւ։
3. Այսպէս և Եզնիկ․ այլք՝ ո՞ք։

Արդարեւ դառինք անմեղք էին աշակերտքն. զոր ինչ տեսանէին՝ զնոյն և գրէին. և զոր լսէին՝ նմին և հաւատային. յաստուածային խորհուրդսն հասու լինել ոչ կարացին. «Տէր, ասեն, եթէ ննջեաց՝ ապա ապրի»: Բազում հիւանդք ննջեն և ոչ ապրին. և իցեն որ ոչ ննջեն և ապրին: Ո՜վ փաղաքշանք տգիտաց. զծածկագէտ զօրութիւնն կամէին սփոփել[1]: Գրէին եթէ զտունն զայն սիրէ Տէրն մեր, և ի տան նորա առաւել զՂազար անմեզ. ոչ ինչ կամէին թէ հասցէ վիշտս ընտանեաց նոցա: Վասն այնորիկ վասն սիրոյ առաւել քան ի Ղազար՝ ի նոսա գթացաւ Տէրն. մերկացաւ զծածկոյթս խորհրդոցն, և ասաց յայտնապէս. «Ղազար բարեկամ մեր մեռաւ»: Զի մի՛ յանկարծակի ընդոստիցեն, կամ ճչելով, կամ կոծելով, կամ արտօսր ի վերայ բանիցն արկանելով, անդէն վաղվաղակի մտաւոր զկնի գուժաբեր բանիցն՝ զանսուգ մխիթարութիւնն մատոյց. «Եւ ես ուրախ եմ վասն ձեր,, ասէ, զի դուք հաւատասջիք. զի ես չէի անդ»:

Ահա դարձեալ պատ ի պատ պատասխանիք, որ ոչ կարացին համօրէն հասու լինել և ի վերայ կալ: Մահու անուն և ուրախութեան՝ միանգամայն հնչեցին ի լսելիս նոցա, և ոչ ի զարմացումն անգամ կարացին հասանել՝ վասն երկբան բարբառոյն: Որպէս և երկչոտութիւնն Թովմայի տեղեակ առնէ զմեզ՝ վասն տխմար անուսմնութեան նոցա. նա ասէ, «Եկայք, երթամք անդր», և Թովմաս ասէ, «Օ՜ն, եկայք՝ երթիցուք մեռանել ընդ նմա». նա երթայ զմեռեալս յարուցանել և կեցուցանել, նոքա կենդանիք[2] ի մահս պատրաստէին: Քանի՜ տարակուսանք են ի տեղւոջ աստ. դիւրագոյն է երկրագործ մշակաց զկորդացեալ երկիր ի գործ արկանել, քան գիտնոց ածել զտգէտ ի գիտու-

1. Չիք ի Տ. այս բան. Ո՜վ... սփոփել:
2. Այլք. կենդանեոյն:

թիւն հաւանութեան. ի սակաւ ժամանակն աշխատի ընդ ամենի երկիրն, և բազում պտղոց ակնկալութիւն է ի նմանէ. իսկ զմարդ կուրացեալ[1] տգիտութեամբ՝ Աստուծոյ միայն կարողութիւն է ի գործ արկանել: Որչափ թերահաւատութիւնն զօրանայր յերկուց կողմանցն, չարին կրկին ուրախութիւն էր յամենայն կուսէ. բայց քանզի Աստուած մարդացեալ միջնորդ Աստուծոյ և մարդկան, ոչ դանդաղեցաւ և ոչ զանգիտեաց[2] յամօթ առնել զբոլոր թերահաւատութիւնն, ըստ հայրենի զօրութեանն՝ հզօրն գործեաց:

« Եկն Յիսուս և եգիտ զՂազար չորեքօրեայ ի գերեզմանի ». և վասն զի մերձ է գեօղն յԵրուսաղէմ մղոնիւք երիւք, համարեաց թէ բոլոր քաղաքին ամբոխ ելեալ[3] եկեալ եւս ի վիշտան անդր: Է իսկ բնութեան մերում սովորութիւն՝ քան զաւետիս՝ զբօթս սիրեմք լսել, մանաւանդ զայլոց՝ քան զանձանց, և մտանել ի տունս կոծոյ քան ի տունս ուրախութեան. ոմն ի մարմնոյ լկտութեան, միւս ոմն չարասէր յոտնհարութիւն, և բազումք ի չատխօսութիւն ընդ վայրաբանութեան, և սակաւք են որ կցորդ լինին սգոյ տրտմութեան: Յայս պատճառս բոլոր բազմութիւն քաղաքին ժողովեալ էին առ քորսն Ղազարու. ագարակն քաղաքացեալ էր[4], և քաղաքն ագարակացեալ. թէպէտ և ոչ ի կամաց էր, վասն բազմութեան ամբոխին՝ ի մէջ իսրայէլի գործէին սքանչելիքն:

« Մարթա իբրև լուաւ եթէ Յիսուս գայ՝ ընդառաջ գնաց նորա, և Մարիամ անդէն ի տան նստէր »: Երկոքին անկեալ էին ընդ գովելի օրհնութեամբք. մին եղև իբրև զբերան մարդոյ[5], և միւսն որպէս զսիրտ՝ աման խորհրդոյ. սիրտն ի

1. Այլք. կորդացեալ:
2. Եղնկ. թերահաւատեաց:
3. Այլք. իջեալ հեղեալ եկեալ էին:
4. Տ. էին:
5. Այլք. բերանոյ:

տեղւոյն հաստատուն կառուցեալ եղաւ. բանն յա֊ ռաջ ընթանայ թարգման սրտին, և պատմեաց զպա֊ ղատանս սգաւոր սրտին ի լսելիս այնորիկ, որ կարէր [1] բառնալ զսուգն ի տանէ սիրելւոյն իւ֊ րոյ [2]։ Գիտաց բանն՝ թէ ամենայն մխիթարիչք նորա եկեալ էին և ժողովեալ, և իւրաքանչիւր անձն լի էին ոգով և տրտմութեամբ. տրտում զտրտում ոչ կարէ մխիթարել և զուարթացու֊ ցանել, և սգաւոր զսգաւոր ոչ կարէ մխիթարել, այլ սուգ ի վերայ սգոյ յաւելուն։ Մի՛ տապիր, ասեն, մի՛ տառապիր. իմ եղբայրն՝ ես մնատա֊ ղագոյն քան զնա մեռայ, այն ինչ հարսն ի տան ածեալ, անզաւակ յաշխարհէս էանց գնաց. ոչ մնաց յիշատակարար [3]. բարձան յիշատակարար և անուն նորա ի միջոյ կենդանեաց։ Այլ ոմն կին յառաջ մատչի և ասէ. Միամօր մի ունէի որդի, այրն մեռեալ, և քոյր և եղբայր ոչ ունէի [4]. և այն մանուկ ի պսակի՝ որպէս առաւելապէս ծա֊ ղիկ մի թառամեցաւ. չեհաս ի քաղաք ընկալչին իւրոյ, չեմուտ ի յառագաստն. չետես զվայելչու֊ թիւն աշխարհիս. յետս դարձաւ զօրութիւնն. եղծեալ ապականեցաւ կարգն տուրեւառիկ փոխա֊ նորդութեանն։ Եւ այլք եւս քան զայս խանդա֊ ղատագոյնս երկրորդէին. զսիրտ բեկանեն, զաղիս գալարեն, զերիկամունս դողացուցանեն. Ջիղքն թուլանան, յօդքն լուծանին, բոլոր զօրութիւն մարմնոյն մեղկեալ անկանին. վայ ի վերայ վայի, և ճիչ ի վերայ ճչոյ, և այրումն ի վերայ այրման, և խարխարումն ի վերայ վիրաց, և կեղեքումն առ ժամանայն չարեաց. թէ արժան իցէ այնպիսի բանից՝ մխիթարութիւն ցուցանել [5], թէ ոչ, (ոչ) [6]

1. Այլք. եկեալ էր։
2. Եզնկ. սիրելեաց իւրոց։
3, Եզնկ. յիշատակարան։
4. Եզնկ. հայր և մայր չունիմ։
5. Այլք. առնել։
6. Պակասէ երկրորդ ոչն. այլք ունին՝ եւ ոչ գիտեմ։

գիտեմ. զմի մարդ եկեալ էին մխիթարել, ամենեքեան նստան ի սուգ անմխիթար։

Զայս ամենայն ամբոխ եթող Մարթա, և ասէ ցՅիսուս. «Տէր, եթէ աստ լեալ էիր՝ եղբայրն իմ չէր մեռեալ. այլ եւ արդ գիտեմ, եթէ զամենայն զոր ինչ միանգամ խնդրեսցես յԱստուծոյ՝ տայ քեզ Աստուած»։ Իմաստութիւն [1] հոգևոր և սէր աստուածային և հաւատք ճշմարիտք, և անսուտ մարգարէութիւն՝ չորեքեան եղբարք հարազատք են. քանզի մի է չարժումն [2] նոցա՝ Աստուած. որպէս և նոյն արուեստագէտն ընդ մի բերան փչէ [3], ոմն սուկ և ոմն թանձր [4], և ոմն մեւս թանձրագոյն, և այլք ըստ իւրաքանչիւր կարգի. թէպէտ և բազումք են թուով՝ ի մի ձայն ասէ և ոչ բազումք [5]. և ըստ ձեռինն շարժողին՝ ընտրութիւնք ձայնիցն երեւին, և գործին մի և նոյն բովանդակ [6] առ ամենեսեան։ Այսպէս Մարթա և Մարիամ, և Ղազար ի մեռեալսն, և եթէ այլ ևս ոք գոյր ընդ նոսա ի տան անդր [7] հաւատացեալ, թէպէտ և որիշ որիշ բարբառէին, մի հաւատ էր ամենեցուն, զմի սէր սիրէին զՔրիստոս, զմի հոգևոր իմաստութիւն ունէին ամենեքեան։ Ի բազմաց միաբանութենէն մարգարէացաւ Մարթա. «Տէր, ասէ, թէ աստ լեալ էիր՝ եղբայրն իմ չէր մեռեալ»։ Ուր կեանք են՝ մահ անդր ոչ մտանէ. բազում անգամ մտեալ էր Տեառն ի տուն Մարիամայ և Մարթայի, մահ և ի գեղջէ անտի հալածեալ էր, թող թէ ի տանէ անտի։ Երկնաւոր իմաստութեամբ ասաց զայն, զի «Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի՝ ըզ-

1. Տ. իմաստուն։
2. Այլք. չարժող։
3. Չիք ի Տ. անուն գործւոյն՝ յերգիոնն, կամ ըստ Եզնկ. յորգոոնս։
4. Այլք. թաւ։
5. Այլք. մի ձայն տայ և ոչ բազում։
6. Այլք. բաւական։
7. Այլք. յաւելուն՝ իբրեւ զնոսա։

վարձս մարգարէի առցէ»․ իսկ որ զԱստուած ընդունի՝ զաստուածային իմաստութիւնն ժառանգեսցէ[1]․ յիմաստութենէ անտի ի մարգարէութիւն վարեցաւ[2]։ «Այլ և արդ գիտեմ, ասէ, թէ զոր միանգամ խնդրեսցես յԱստուծոյ՝ տացէ քեզ Աստուած»։ Այս բարբառ մարգարէութիւն է, քանզի զամենայն ինչ էած և կարգեաց[3] ի տալ անդր քեզ, ոչ միայն զմիոյ մեռելոյ յարութիւն, այլ և զվաղնջուցն եւս զանցեալ դարուցն։ Բայց գուցէ ումեք թերի բանս թուեսցի, կամ զխընդրելն յԱստուծոյ կամ զտալ նորուն․ զայս և ինքն Տէրն ասաց՝ թէ «Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ»․ և զմիտսն նոցա հաստատէ․ «Ոչ ոք գիտէ զՀայր եթէ ոչ Որդի, և ոչ զՈրդի ոք ճանաչէ՝ եթէ ոչ Հայր»։ Այս բարբառ զմիաբանութիւն ուսուցանէ և ոչ զերիցութիւն կամ զկրտսերութիւն․ վասն այսորիկ և Տէրն հաւանեցաւ ընդ հաւատոյն Մարթայի։ «Ասէ ցնա Յիսուս․ յարիցէ եղբայրն քո․ ասէ ցնա Մարթա․ գիտեմ զի յարիցէ ի յարութեան յաւուրն յետնում»։ Եւ Տէրն միանգամայն յայտնեաց նմա զյետինն և զառաջինն․ «Ես իսկ եմ յարութիւն և կեանք»։

Դրունք երկնից բացան կնոջն․ զինքնածագ լոյսն ետես, յանմատոյց տեղին եհաս, որդւոցն Զեբեթեայ հաւասարեաց[4]․ և ոչ զտեսական լանջօքն անկաւ՝ այլ յիմացական[5] զօրութիւնսն վերացաւ․ զբանն կենաց չօշափեաց, ի նոյն կեանս ընկղմեցաւ։ Եկն արտասուօք, և լցաւ ծաղու․ էր վշտալից և եղև բերկրեալ․ մտացն աչք բացան, ներքին մարդն լուսաւորեցաւ․ ի բաց գնաց թախծութիւնն, և զուարթացան գոյնք երեսացն․ ողջացան դեղածք[6] մարմնոյն, և մոռացաւ զսուգն

1․ Եզնկ․ ժառանգէ յԱստուծոյ։
2․ Այլք․ վերաբերեցաւ։
3․ Եզնկ․ բափեալ․ այլք՝ փակեալ։
4․ Այլք․ նմանեաց։
5․ Եզնկ․ յիմանալի։
6․ Այլք․ կեղածք։

անմխիթար. բօթ եբեր զեղբօրն[1], և աւետիս լուաւ զյարութեան. մինչև յարուցեալ ետես զեղբայրն, ի ձեռն յարութեան մեռելոյն՝ զկենդանին ետես[2], զկենդանին և զկենդանացուցիչն ամենայն մեռելոց։

« Ես իսկ եմ յարութիւն և կեանք »։ Եղիա յարոյց զմեռեալն՝ և դարձեալ մեռաւ. այսպէս և Եղիսէս[3], մի և երկուս. ես ոչ միայն յարուցիչ եմ՝ այլ և յարութիւն. յարուցանեմ և կեցուցանեմ յանմահութիւն. որ հաւատայ յիս՝ զմահ մի՛ տեսցէ և մի՛ ճաշակեսցէ յաւիտեան։

Զայս ասաց Տէրն մեր ցՄարթա, և անդէն վաղվաղակի զվարձս վարդապետութեանն պահանջեաց ի նմանէ. « Հաւատա՞ս, ասէ, ամենայնի[4] զոր լուարս. և նա ասէ. այո՛ Տէր, ես հաւատացի թէ դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ, որ գալոցն էիր յաշխարհ »։ Որպէս վերագոյնն ասացաք՝ զչորս անուանս մարգարէութեան զոր ընկալաւ և զգեցաւ[5] կինն ի տեղւոջ անդր. « Դու ես, ասէ, որ գալոց էիր յաշխարհ »։ Յաշխարհի էր, և դու գալո՞ց ասես։ Զմարգարէիցն բան երկրորդեաց, զոր և շամրտացի կինն ասաց. «Յորժամ Մեսիա գայ՝ պատմէ մեզ զամենայն ». ասաց զառ ի կուսէ ծնունդն, և ակնարկեաց զերկրորդ գալստեանն. քանզի որ զսկիզբն տեսանէ՝ և ի կատարումն անդր հայի. իբրև անկաւ ի ներքս յարքունիսն, զամենայն ինչ տեղեկացաւ առաւելապէս, և զմեծամեծսն Աստուծոյ լուաւ. եկն իբրև զմարդ տրտում, և գնաց իբրև զհրեշտակ Աստուծո՛յ ուրախալից։ Զոգաւ ասել ցքոյրն իւր. « Վարդապետ եկեալ է, և կոչէ զքեզ »։ Արդարև ճշմարիտ վարդապետ. առանց ալփապետաց ուսուցանէ, և ա-

1. Տ. զեղբայրն։
2. Այլք. մինչ չեւ յարուցեալ եղբայրն կամ եղբօրն, ի ձեռն մեռելոյն զկենդանին ետես։
3. Այլք. Եղիսէէ։
4. Այլք. այսմիկ։
5. Այլք. զչորս մասունս մարգարէական զգեցաւ։

ռանց սիղովքայից հեղէ, և զամենայն պէտս բանից ունի և կատարէ[1]: Ասաց վարդապետ, և եմուտ ի կարգ աշակերտաց. խօսեցաւ ընդ Մարիամայ լռելեայն և աշակերտեաց ի նոյն վարդապետութիւն հեշտ կամաւ[2] և դիւրահաւան: Եւ վաղվաղակի գնաց առ Յիսուս ի նոյն տեղի, և ի նոյն ուրախութիւն և առ նոյն ուսուցիչ: Զոմն ծածուկ և զոմն յայտնի՝ ձգեաց զերկոսին ի սգաւոր յաշխարհէս յանտրտմական ուրախութիւնսն: Հրէայքն որ եկեալ էին առ Մարիամ մխիթարել վասն եղբօրն իւրոյ, ունայնք և թափուրք յերկնաւոր մխիթարութենէն էին. սգաւորք և թախծեալք նստէին անդէն ի տան՝ յառաջին արտասուքն շաղախեալք[3], և նովին տրտմութեամբք ասեն ցմիմեանս. Երթայ ուրեմն ի գերեզման՝ լալ անդր: «Յարեան և նոքա և գնացին ընդ նմա». ոչ ի յարութիւն անդր՝ այլ ի գերեզման անդ մեռելոյն. զի «Որում տուեալն է ասէ՝ տացի և յաւելցի նմա, և որում ոչն է տուեալ, թէ և ունիցի եւս և զայն, բարձցի ի նմանէ». ոչ առ ագահութեան տուողին, այլ առ չարութեան ընդունողին[4]: Հանապազ գերեզմանաւէրք էին. եթող[5] անդր զմարդիկն մեռեալ. այլ սուտ ատուած անուանելով և զնոսին մեռեալս ասելով. «Նստէին, ասէ մարգարէն, կանայք նոցա և լային զԹամուզ»: Ի նոցանէն, ասէ, յարեաւ Մարիամ և մերձեցաւ[6], և եկն առ այն՝ զոր յառաջագոյն ճանաչէր, թէ որ զբազում մեղսն իմ կարաց շնորհել ինձ ձրի, նոյն և կարող է զծանրատաղտուկ տրտմութիւնս իմ փարատել յինէն: Անկաւ առաջի նորա և երկրպագեաց զնոյն բանս զոր ա-

1. Եղնկ. և այլք՝ զամենայն պէտս դպրութեան ընդունի կամ լնու:
2. Եղնկ. հեշտ կամակ, այլք՝ հեշտակամ:
3. Այլք. շաղեալք:
4. Այլք. վասն վատթարութեան ընդունողացն:
5. Այլք. թող:
6. Այլք. չունին զայս բառ:

սաց քոյր նորա. «Տէր, եթէ աստ դիպեալ էիր՝ եղբայրն իմ չէր մեռեալ»: Մերոյ դպրոցի մանկունք զմի բարբառ ունէին խօսել[1]. հաճք և հաւանք և միաբանք ըստ կամաց վարդապետին՝ յորդորէին[2] ի նոյն ուսումն. սոյնպէս և քորքն Ղազարու երկոքին՝ միով անհատ սիրով ի մի որս կենդանի երկնաւորին ըմբռնեցան. զմի սէր սիրէին[3] երկոքեանն զՏէր. զմի գիտութիւն արբին նմանապէս[4], տեսին մարդ և հաւատացին յԱստուած. ի լրութենէ սըրտից նոցա՝ և բանք բերանոյ նոցա զնոյն միաբանութիւն երկրորդեաց:

Ցաշխատեալ մարմնոյ բղխեն քրտունք, և ի զայրագին որտէ աչք բերեն զարտասուս, ոչ միայն ի վերայ մեռելոց, այլ և ի վերայ կենդանեաց սիրոյ[5], յորժամ եկեացէ ի հեռաստանէ: Ետես Մարիամ զՅիսուս, և երկունք գթոյ ստիպեցին զնա, յիշատակ մեռելոյն և կենդանի սիրոյն տեսիլ[6]. ոչ ճչեաց ըստ աշխարհական կարգի, այլ յոյժ ցնծութեամբ[7] եհեղ արկ զարտասուսն առաջի ողորմածին: Այսչափ աղիողորմ էր տեսիլն՝ մինչեւ զամենայն Հրէայսն[8] բարձրակականս լացոյց. ի նոյն միաբանութիւն և Տէրն մեր հաւասարեաց. արտասուս առ արտասուս, և տրտմութիւն առ տրտմութիւն. համարեաց թէ զնոյն սուգ սգացաւ[9]: Վասն որոյ և ասէ գիրն[10], թէ «Խռովեցաւ Յիսուս յոգի իւր». որպէս թէ յամենայն զօրութենէն իւրմէ տրտմեցաւ. ոչ կարաց պարզաբար բարբառել՝ թէ «Ո՞ւր եդիք». այլ մռնչելով՝ ասէ.[11] լալով և

1. Եզնկ. զնոյն բարբառ ուսանէին խօսել:
2. Այլք. յորդորին:
3. Այլք. սիրեցին:
4. Այլք. երկոքեանն:
5. Եզնկ. ի վերայ սիրելւոյ. այլք՝ կենդանի սիրելւոյ:
6. Այլք. երկու երկուենք սիրոյ... և տեսիլ կենդանի սիրելւոյն:
7. Այլք. ցածութեամբ:
8. Եզնկ. Հեբրայեցիսն:
9. Մի օր. զգեցաւ:
10. Այլք. քանզի ասէ աւետարանագիրն:
11. Այլք յաւելուն. ոչ այսպանելով, այլ:

արտասուօք, կիսաբանութեամբք, իբրեւ զտրտմակից և զգակից ի վերայ սիրելւոյ իւրոյ։ Ի յորդահոս անձրեւաց առատաբեր լինէին անդաստանք մշակաց, անդեայք[1] և անապատք բուսուցանէին զդալարս իւրեանց[2]. սոյնպէս և յորդ արտասուք մարդկան ի գութ ածէին զԱստուածն մարդացեալ. եղև Նոցա կցորդ սգոյն, զի լինիցին մարդիկ մխիթարակից Աստուծոյ։ Բազում սերմանիք ի բազում ամաց ընդարմացեալք փտէին[3] ընդ հողով անբոյսք. վայել էր երկնի միանգամայն իսկ տեղալ ի վերայ երկրի[4]. զի թէ մի հատ բուսցի, վաղվաղակի ապա և ամենեցուն է ակնկալութիւն բուսանելոյն։

«Ո՞ւր եդիք, ասէ, զնա. — Տէր,[5] եկ և տես»։ Դեռ եւս որսայր զմարդկան փրկութիւնն։ Ի Բեթանիայ մինչեւ ի Բեթաբրա[6] եօթանասուն և երկու մղոնք են. յայնչափ հեռաստանէ գիտաց զմահն Ղազարու, մօտ եւս եկեալ, և արտասուեալ ըստ ախտակցութեան սգոյն, և տգիտանայ[7]։«Ո՞ւր եդիք զնա». դուք եդիք, և ես կենդանի առնում զնա[8]. դագաղօք տարայք զնա և ես ձայնիւ կարդամ։ Իսկ եթէ այդ այդպէս է, ապա առ ի՞նչ հարցանես, Տէր։ Աստուածային գործ գործելոց էր ի տեղին[9]. դուցէ զրկիցէին ինչ ի մարդկային բնութենէ. քանզի բազում անգամ եղև առ Նոսա յայտնութիւն երկնաւոր շնորհացն[10]. անմարմնական զօրութիւնքն մարմնաձեւ երեւեցան[11]։ Սա

1. Եղնկ. ապառք. այլք՝ առապարք։
2. Այլք. արօտականաց։
3. Այլք. կային։
4. Այլք. վայելէր իսկ երկնի և երկրի տեղալ ի վերայ նոցա։
5. Եղնկ. յաւելու՝ ասեն։
6. Եղնկ. Բեղաբրէ։
7. Եղնկ. և այլք՝ մօտ եւս եկեալ և ի կամրջին՝ տգիտանայ։
8. Եղնկ. յաւելու. Դու եդիք, և կենդանի առնում. դագաղօք տարայք։
9. Այլք. գործք գործելոց էին ի տեղւոջն։
10. Այլք. յայտնութիւնք երկնաւորք։
11. Այլք. մարմնաձեւ երեւէին՝ այլ ոչ մարմնացան։

միայն կրէ զերկուս ներգործութիւնս, վասն այնորիկ երկոցունց կողմանցն զգուշանայ հաստարակ. ոչ միայն հարցանելովն շատանայ[1], այլ և արտասուօքն ստուգեաց, և ի նոցունց ընկալեալ անսուտ վկայութիւն:

« Տեսէք, ասեն, որչափ սիրէր զնա ». թէ որով սիրով գթայր, զի և ինքն արտասուեաց: Մարմնոյ ոչ միայն աչքն արտասուեն, այլ և բոլոր անդամք մարմնոյն տանջին[2]. որով և Տէրն մեր բազում անգամ վերացաւ[3] յաշխարհի. այնչափ խորամուխ[4] ուսոյց զմարմնոյ բնութիւն, մինչ զի եւս վատթարագոյն պատճառս յաղագս հայհոյութեանն առնել[5]: « Այն է սա, ասեն, որ եբաց զաչս կուրին. արդ ո՞չ կարէր սա այնպիսի նշանս առնել՝ զի և Ղազար մի՛ մեռցի »: Դուք սովոր էք հայհոյել. զի որ զծովն կարմիր[6] բարժանեաց և սքանչելիս մեծամեծս արար, հայհոյեցէք և ոչ գոհացարուք զԱստուծոյ, և անսանոյ փոխանակեցէք. և ի Մովսիսէ երդմամբ ուրացարուք. եթէ չէր Մովսէս ընդ ծովն ճանապարհ արարեալ, զբոլոր ժողովուրդն արկանէր փարաւոն ի սուր սուսերի իւրոյ. որ զայնչափ բազմութիւնն ի մահուանէ ապրեցոյց՝ չկալայք շնորհ, արդ զի՞ վասն սորին բժշկութեան շնորհակալ լինիք[7]: Շունչ կուրին կենդանի էր և շարժէր զմարմինն. աչք նորա մեռեալ էին. շունչ ի մեռեալ մարմինն ոչ բնակէ, և ոչ լոյս արեգական յաչս մեռելոյ. եթէ զմեռեալ աչս կենդանացոյց և զհրաժարեալ լոյսն անդրէն շնորհեաց, ապա եթէ զբոլոր մարմնով մեռեալն կեն-

1. Այլք. շատացաւ:
2. Եղնկ. և այլք՝ բոլոր անդամք քրտանն կամ քրտնուն:
3. Այլք. վարեցաւ:
4. Այլք. խորամուխ:
5. Աստանօր Տ. Թուի շփոթմամբ ինչ գրեալ. մինչեւ ոչ եւս պատճառ յեղական հայհոյութեամբ վարդապետութեան:
6. Այլք. զմեծ ծովն բաժանեաց:
7. Եղնկ. ի մահու բերանոյ ... վասն սորին լինիցիք:

դանացոյց անդրէն[1]. բայց դուք որչափ և կամիք յաճախեցէք ի դոյն հայհոյութիւն, թերևս ի դմին տեղւոյ ամաչիցէք[2], վասն առաջին և վերջին հայհոյութեան ձերոյ. մանաւանդ յորժամ բազումք ի ձէնջ փառաւոր առնիցեն զԱստուած ի վերայ անպատում[3] սքանչելեացն զոր տեսանիցէք։

« Յիսուս, ասէ, գնաց գալ[4] ի գերեզմանն, ուր եդեալ էր անդր զՂազար յայրի միոջ, և վէմ մի յարուցեալ[5] ի բերան այրին »։ Սովորութիւն էր առաջնոցն մեծաւ աշխատութեամբ ամրացուցանել զբնակսն[6] իւրեանց, վասն զի հեռի էր ի նոցանէ յոյս յարութեանն. զայս կեանս միայն գիտէին, և զայն մահ դառնութեան[7]. յիշատակ մեռելոյն զգերեզմանն համարէին. չիրիմ՝ յիշատակ նոցա ասէին[8], և զանուն մեռելոյն ի վերայ դրացն փորագրէին. անկնկալութիւն յարութեանն անցեալ էր զամենեքումբք։ Վասն այսորիկ Մովսէս ակամայ Աստուծոյ հրամանաւն ի տեղւոյ անդր[9] խոնարհի ի սովորութիւն առաջնոցն. « Եթէ եղբայր ոք անորդի մեռցի, մտցէ եղբայր նորա[10] առ կին մեռելոյն, և յարուսցէ զաւակ եղբօր իւրոյ ». Հընարք վասն ժառանգութեան երկրին վիճակելոյ. և դարձեալ՝ երկրորդ օրինօքն անդրէն ընդդիմացաւ. և իսրայելացիքն զնոյն սովորութիւն ունէին առ գերեզման մեռելոյն։

« Ասէ Յիսուս. ի բաց արարէք զվէմդ ի բե-

1. Եղնկ. և այլք. բոլոր մարմնովն մեռեալ էր՝ անդրէն կենդանանայր։
2. Այլք. ամաչեսջիք։
3. Այլք. ի վերայ մեծի կամ մեծամեծ։
4. Յայլս չիք՝ գալ։
5 Այլք. յեցուցեալ։
6. Եղնկ. զբնակեալս. այլք՝ զգերեզմանս։
7. Այլք. զայն մահ դառնութեան միայն համարէին կամ հաւատային։
8. Այլք. ասէին։
9. Չիք յայլս՝ Աստուծոյ հրամանաւն ի տեղւոյ անդր։
10. Այլք. եղբայր ուրուք . . միւս եւս եղբայրն։

բանոյ գերեզմանիդ»։ Յորժէ երկինք[1] դողան և լերինք հալին, վասն փոքր մի վիմի օգնական խնդրէ ի մարդկանէ. նա՛, ոչ օգնականս այլ վկայս. սատարութիւն զոր էարկ առ մարդիկ՝ արտասուօքն, զնոյն փոխարէնս պահանջէ վասն վիմին՝ ի բաց պահանջումն և վերացումն[2]։ Զերկիր մարդիկ գործեն և զերկինս հրեշտակք ունին. Տէրն հրեշտակաց և մարդկան եկեալ էր ի տեղի անդր. հրեշտակք ոչ ինչ պիտոյ էին յօգնականութիւն անդր. որոց էր սովորութիւն գործել զերկիր՝ նոցունց և հրամայեաց. դուք, ասէ, առէք զքարդ[3] ի վեր, և դուք հայեցարուք ի գերեզման անդր, եթէ կա՞յ ի ներքս մեռեալն, եթէ չարաչար է տեսիլ մեռելոյն. աչք ձեր վաղիւն վկայ լիցին. և թիկունք ձեր՝ ծանրութեան վիմին, և աչք ձեր՝ մեռեալ դիականդ, և հոտ նեխոյդ՝ ռնկաց ամենեցուն որ մօտակայքդ էք[4]. ի մէջ այսչափ բազմութեան վկայից՝ և զյարութեան և զտեսութիւն[5] մեռելոյդ յուրաստ ոչ կարէք առնել[6]։ Գիտէր զնոցա չար սովորութիւնն. և յամենայն կողմանց արգելոյր[7] զնոսա ի հայհոյութեանցն։ Զնոյն վկայութիւն վկայեաց և քոյր մեռելոյն. «Տէր, ասէ, արդ հոտեալ է, քանզի չորեքօրեայ է. ասէ Յիսուս. ո՞չ ասացի քեզ, եթէ հաւատաս՝ տեսցես զփառսն Աստուծոյ»։ Մարդկան՝ ի մեռելոյ գայ հոտ նեխոյ. իսկ Աստուծոյ՝ ի մեղաւորէ. ամենայն աշխարհ առ հասարակ նեխեալ էր, ոչ գարշեցաւ՝ և ոչ դարձոյց զերեսս իւր յումեքէ, այլ յիւր անուշահոտութիւնն համեմեաց զամենեսեան։ Մշակին ոչ գոյ հոտ նեխոյ ի նեխեալ սերմանէ, այլ լի

1. Այսպէս և Եզնիկ. այլք՝ երկիր։
2. Եզնիկ. փոխարէն պահանջէր վիմին ի բաց վերացումն. այլք՝ առ ի վիմին ի բաց վերացումն.
3. Այլք. զվէմդ։
4. Ոմանք. մօտ կայք։
5. Յայլս չէք՝ տեսութիւն։
6. Այլք. լինել։
7. Այլք. հնարէր արգելուլ։

են միտք իւր խնդութեամբ. եթէ պարարին միտք[1] ի հոտոյ անդաստանաց. որում սակաւիկ մի եւս վկայութիւն Իսահակ ի զննել իւրում զԵսաւ, և յօրհնելն իւրում զՅակովբ: Զոր դու ապականութիւն ասացեր, ո՛վ Մարթա, անտի բուսանելոց են անապական կեանք մարդկան. միայն աներկբայ հաւատա յԱստուած, և անտի հարկանի քեզ հոտ անոյշ և կենդանի, այնչափ պայծառ և լուսաւոր՝ մինչև զփառսն Աստուծոյ այդու հաւատովք կարես տեսանել: Ցերկիր՝ ուր ոչ են անկեալ սերմանիք, եթէ բազում անգամ տեղասցեն անձրևք[2] ի վերայ նորա, ոչ բուսանի ցորեան և կամ գարի. ի գերեզման՝ յորում մեռեալ ոչ եդեալ է, եթէ բազում չիփորք երկնաւորք հնչեսցեն, ոչ ոք տեսցէ ի նմանէ[3] զյարութիւն մեռելոց: Աւանդ[4] մեռեալ և կենդանի եդեալ ի գերեզմանի. դու զմահ դաւանես, և Տէրդ՝ կենդանի զկեանս խոստանայ և յարուցանէ. կրկնեա և երեքկնեա զդոյն վկայութիւն, զի պապանձեալ լիցին[5] բերանք հայհոյող մարդկան, յորժամ զչորեքօրեայ մեռեալն կենդանացեալ տեսցեն ի մէջ հրապարակաց[6]: Վասն չարահոտութեանդ մի՛ ինչ կասկածես յամենեցունց[7] Տեառնէդ. աղ է դա անուշացուցիչ ամենայն հարեալ մարմնոյ, լոյս է դա թափանցանց ամենայն կուրացեալ աչաց, ձայն է դա և բացումն ամենայն խլացեալ լսելեաց. զոր և այժմ առ սիրելի եղբայրդ քո տեսանես[8]. զնա աչօք տեսանես, և մտօք զփառսն Աստուծոյ[9] իմանաս:

1. Այլք. խելք իւր:
2. Այլք. ամպք:
3. Եղնկ. հնչեսցեն ի նմա, ոչ ոք տեսանէ ի նմա. այլք. հնչեսցեն ի վերայ նորա՝ ոչ ոք, և այլն:
4. Եղնկ. Էշ անդ. այլք՝ աւադիկ:
5. Այլք. պապանձեսցին:
6. Այլք. հրապարակին:
7. Եղնկ. յամենատուրք:
8. Այլք. այժմ գործով առ սիրելի եղբօրդ քում տեսանիցես:
9. Այլք. զփառս նորա:

« Եւ երբև ի վեր առին զվէմն ի դրաց գերեզմանին, Յիսուս ամբարձ զաչս իւր յերկինս, և ասէ. Հայր, գոհանամ զքէն, զի լուար ինձ. և ես գիտեմ՝ զի յամենայն ժամ լսես ինձ, այլ վասն ժողովրդեանս որ շուրջ կան զինեւ՝ առնեմ, զի հաւատասցեն եթէ դու առաքեցեր զիս » : Մինչ չեւ ի վեր առեալ զվէմն՝ Տէր մեր զՂազար յարուցեալ էր [1]. մինչեւ [2] Յիսուս զաչսն ի վեր ամբարձեալ և զՀայր տեսանէր, և մինչ չեւ ձայնիւ կարդացեալ՝ Հայր լսէր նմա. ոչ յայնմ ժամու միայն՝ այլ և յամենայն ժամու. իսկ տեսողացն և լսողացն՝ յայնմ ժամու միայն : Ո՞յր ուրուք ոգի զատ իցէ ի մարմնոյ. — ոչ ուրուք ի կենդանեաց. Եւս քան զայս միաբանութիւն [3] միասնական Սուրբ Երրորդութեանն : Ամաչեա, Թէոդորիտոս [4], և մի՛ համբառնար զաչս [5] յերկինս, Նստորիոս, զի կոյր աչօք ես [6] ի միասնական [7] Սուրբ Երրորդութենէն : Վասն կորստեան ձերոյ միաբանեցէք, պատմելով զամօթալի վարդապետութիւնդ. ոմն, ասեն, կարդայ, և ոմն, ասեն լսէ. ոմն աղաչէ և ոմն աղաչի. ոմն խանդաղատէ և զոմըն ի խանդաղատանս ածէ. իբրեւ ոչ ունի իշխանութիւն յարութեան, զՀայր կարդայ յօգնականութիւն վասն մեռելոյն : Ո՛վ, քանի՜ դրսովելի են բանք արանցս այսոցիկ, ոչ միայն յաչս իմաստնոցն՝ այլ և որ կարի տխմարագոյնք են ի սուրբ եկեղեցւոյ : Ի տան քահանայապետին՝ յորժամ յարոյց զդուստր նորա ի մեռելոց, ոչ աղաչեաց և ոչ թախանձեաց, ոչ պաղատեցաւ և ոչ զաչս յերկինս համբարձ [8], և ոչ առ Հայր պաղատեցաւ [9]. հայեցաւ ի մեռեալն՝ և

1. Ոմանք. յարոյց:
2. Այլք. մինչ չեւ:
3. Այլք. անզատական միաբանութիւն:
4. Եղնկ. Դէովդորոս:
5. Եղնկ. զգլուխ:
6. Ոմանք. կոյր աչօք էք:
7. Եղնկ. ի միաբուն. այլք՝ ի միաբանութենէ.. Երրորդութեանն:
8. Այլք. և ոչ յերկինս հայեցաւ:
9. Այլք. կարդաց:

ասէ. «Տալիթայ, կումի[1]. աղջիկ դու, քեզ ասեմ, արի՛ կաց». զարթեաւ իբրեւ ի քնոյ, եւ կանգնեցաւ վաղվաղակի իբրեւ զառողջ՝ առ ժամայն, եւ բազմականի արժանի[2]: Սոյնպէս ի Նային քաղաքի. բազում ամբոխ էր զհետ դագաղացն. ոչ ոք զնա ի մարդկանէն թախանձեալ[3], եւ ոչ նա առ Հայր աղաչանս մատոյց. ձեռն միայն ձգեաց ի դագաղսն, եւ մեռեալն վաղվաղակի կանգնեցաւ: Սոյնպէս եւ յամենայն նշանագործութիւնսն. ուր անձամբ առնէր՝ զզօրութիւն աստուածութեանն ցուցանէր[4]. ուր առ Հայր աղաչանս մատուցանէր, զկատարեալ սիրելութիւնն ցուցանէր. (զմեծ նշանաց՝ զյարութիւն մեռելոց՝ կրկին մեծագոյն: Յորժամ ի ձեռն Որդւոյ Հայր հանգչի եւ առաքինութեամբ հօր՝ որդի իմանի, այն ճշմարիտ անմահ յարութիւն)[5]: «Վասն ժողովրդեանս առնեմ», ասէ. զմեկնութիւնն ինքն[6] թարգմանէ. «զի սոքա հաւատասցեն՝ եթէ դու առաքեցեր զիս յաշխարհս»: Ճշմարիտ գոհացողութիւն Աստուծոյ՝ վասն մարդկան. «Գոհանամ զքէն, Հայր, ասէ, զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի գիտնոց, եւ յայտնեցեր տղայոց եւ[7] անմեղաց». ամենեքեան անկեալ եմք ընդ կարեւոր մեղանօք[8], այլ ընդ անքաւելի մեղօք անկեալ են այնոքիկ՝ որ յանքակելի[9] բնութիւնն բաժինս արկանեն. իբրեւ անդ ոչ են ձեռնհաս առնել խռովութիւնս, ինքեանք յանձինս իւրեանց տագնապին[10]. ի մարդկանէ հայհոյեալք եւ յԱստուծոյ դատապարտեալք՝ ընկեցան յօտարութիւն, եւ ջնջեցան[11] ի կենացն դպրութենէ:

1. Այլք յաւելուն՝ որ թարգմանի:
2. Այլք յաւելուն՝ եղեւ:
3. Այլք. թախանձեաց:
4. Եզնկ. զկատարեալ աստուածութիւնն ցուցանէր. Տ. որ:
5. Այս բան չէք յԵզնկ. եւ յայլս:
6. Եզնկ. ինքնին:
7. Այսպէս եւ Եզնկ. յայլս չէք՝ եւ:
8. Այլք. մեղօք:
9. Այլք. յանքաժանելի:
10. Այլք. խռովեալ տագնապին:
11. Այսպէս եւ Եզնկ. այլք՝ հայհոյին.. ջնջին:

Այլ մեք փութամք [1] անդրէն առ գերեզմանն Ղազարու. զոր ոչ է արժան գերեզման անուանել՝ այլ յարութիւն մեռելոց: «Զայս իբրև ասաց, ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Ղազարէ, եկ արտաքս [2] ոտիւք կապելովք և ձեռօք պատատելովք, և երեսօք վարշամակապօք [3]»: Քաջ միտ դիր, աղաչեմ. յորժամ յաստուածային գիրս մխեսցիս ընթեռնուլ և իմանալ զզօրութիւն բանիցն, գիր մի ձայնաւոր մի՛ անցցէ զմտօք քոյովք. ամենայն չարագրածքն յղի են երկնաւոր [4] իմաստութեամբըն, և ծնանին զբանս հոգեւորս իմաստուն մըտաց. առ վատառուսն [5] ամլանան, և առ քաջունական յիշատակաց՝ բազմորդի լինին. այնպէս և ի լսելիսն իւրաքանչիւր [6]. որոց առողջ են քիմք ականջացն, ըստ այնմ և համադամքն անուշանան մտացն [7]: «Ի ձայն բարձր աղաղակեաց», և կարդաց զանուն մեռելոյն [8]: Զի՞նչ. սաստկութի՞ւն ձայնին ընդոստոյց արդեօք. ոչ, զմտաւ անգամ մի՛ ածեր. մեռեալն զմեռեալ յարոյց երբեմն, և ձայն [9] բարբառոյ անդ ոչ գոյր ի միջի: Աղաղակեաց ամենայնիւ [10] վասն ամենայն բազմութեան մարդկան [11] հարկեցոյց զամենայն տեսանելիս յինքն կորզելով: «Որ հարցի, ասէ, ընդ մեռեալ՝ պիղծ կոչեսցի մինչեւ ցերեկոյ». կատարեաց զհրամանս օրի-

1. Այլք. փութացուք:
2. Այսպէս և Նշնկ. այլք յաւելուն՝ և եղ արտաքս:
3. Նշնկ. ձեռօք պատեալովք և երեսօք պատատելովք. այլք՝ ձեռօք երիզապնդովք, և երեսօքն պատատելովք:
4. Ոմանք. ամենայն նշանագիրքն լի են հոգեւոր իմաստութեամբ:
5. Այլք. վատոուամուսնն:
6. Այլք. միտք:
7. Նշնկ. համադամք մտացն անուշանան. այլք՝ հանգամանք մտացն:
8. Նշնկ. կարդաց մեռելոյն, զի. այլք՝ կարդաց զմեռեալն. ոչ երէ:
9. Այլք. մի ձայն բարբառոյ:
10. Ձեռ յայլս՝ ամենայնիւ (ձայնիւ):
11. Այլք յաւելուն՝ զի ՚ի ձեռն ձայնին լուծցէ զամենայն հակառակութիւն:

նացն. հեռի եկաց ի գերեզմանէ անտի կանգունս երկոտասանս, ոչ մերձենալով ի մեռեալ անդր. փոխանակ ձեռինն զձայնն սաստկացոյց. ձայնն եղև որոտումն. յերկնաւոր արտասուացն՝ ցօղ շահեկանս յամպոցն[1]. խստութիւն վիմին կակղացաւ և եղև անդաստան բերրի. քարինք որ անբոյս են ի խոտոյ՝ մալեաց կակղեաց սաստկութիւն ձայնին, և առնկալաւ զշայեկանութիւն անձրևուին[2] և էած մածոյց զլուծումն սերմանն: Հոտ նեխոյն դարձաւ ի հոտ անուշութեան. էառ մեռեալ և ի դուրս ետ կենդանի, եմուտ ձայնն ի գերեզմանն, կալաւ ըզձեռանէ մեռելոյն. ոչ քարշեաց և ոչ դնացոյց, վասն զի կապեալ էր կապանօք, և պատեալ էր պատանօք[3], որպէս հրեշտակն զԱմբակում մարգարէ՝ հացիւքն եփելովք և թանիւքն հասելովք[4] զբոլոր կերակուրն տարաւ հասոյց կուրին[5] յերկիրն բաբելացւոց: Երագ է բանն Աստուծոյ քան զհրեշտակ երկնից. որչափ երագ է՝ առաւել զօրագոյն է. (Նա ի պատճառս վարսիցն զբոլորն մարդն տանէր, բարձեալ զմառանն[6]. սաստկութիւն ձայնին միջնորդի[7] պատճառանօք, և ոչ ամենևին ի կտաւն մերձենալով՝ յական քթթել[8] էած կացոյց զհոգին ի հեռաստանէ, և միաբանեաց ընդ լուծեալ մարմնոյն, ընդոստ յանդնդային քնոյն, առանց քայլափոխ լինելոյ. ուր կամքն Տեառն կամեցան՝ վաղվաղակի ի տեղւոջ անդր գտաւ[9]: Սա-

1. Այլք. որոտումն երկնաւոր, արտասուքն ցօղ շայեկան ամպոց: ամպոց:
2. Այս տող ըստ Եզնկ. և առընկալաւ.. անձրևւին՝ պակասէ ի Տ. ըստ այլոց՝ զշայեկան անձրևւքն ըմբռնեւն:
3. Չիք յԵզնկ. և յայլս՝ պատեալ էր պատանօք:
4. Այլք. հացիւն եփելով և թանիւն հասելով:
5. Այսպէս և յԵզնկ. յայլս չիք այս բառ՝ նշանակիչ դրոյն, այլ յաւելուն, զբոլոր կերակուր հնձողացն:
6. Եզնկ. զբոլոր մառանն բարձեալ տանէր ըստ իւր.
7. Եզնկ. ոչ միջնորդ:
8. Եզնկ. քթթումն:
9. Եզնկ. ագաւ.

կայն յայնժամ առ՛նա ոչ մերձեցան)[1]։ Որ կապեցէքդ, ասէ, լուծէք, և որ պատեցէքդ՝ քակեցէք, մի՛ գարշիք, ոչ գոյ հոտ նեխոյ. մի՛ գարշիք ըստ օրինացն. զի չէ մեռեալ այլ կենդանի է. տեսէք, ձերով նշանով կայ կապանքդ. ծաներուք ձերովք ձեռօք պատեալ զերեսս[2]. միաբանեցէք և դուք ընդ այլ վկայսն վասն մահուան դորա, լերուք ամենեքեան միաբան վասն յարութեանդ զոր տեսէքդ։ Միով մրգով ճանաչի բոլոր պտուղ բերոց ծառոցն[3]. սոյնպէս և ամենայն ճաշակք, բարուքն իբրև զբարիս և ընդդէմքն որպէս զատելիս. ուրախարար պտուղ տեսանին ի տեղւոջ անդր մանաւոր առժամայն՝ ամենայն մասանցն առ յապա աւետիք։ Վասն որոյ և բազումք ի տեղւոջ անդր յանհաւատ Հրէիցն հաւատացին. զայլ սգաւորսն եկեալ էին մխիթարել, զանձինս մխիթարեցին անտրտմական ուրախութեամբն, և այլոցն աւետիս ի քաղաքն տարան։

Գիտեմք զի ի միտս ձեր կամիք հարցանել, եթէ առ ի՞նչ զՂազար կոչեաց ի յանուանէ[4]։ խնդրելի է բանդ և ոչ զանց առնելի. է որ ըստ գոյացութեան և է որ ըստ զօրութեանն. և Տէր մեր երկոցունց ի հարկէ զինքն վարէր. ըստ գոյացութեան բազում մեռեալք ի գերեզմանի դնին յաշխարհի[5]. միոյն պէտք էին արտաքս կոչելոյ.

1. Յայլս չիք այս բան։

2. Եղնկ. զձեռս ձեռացդ զպատեալդ. այլք՝ տեսէք ձերօքն նշանօքդ. ծաներուք ձեռօք ձեր. զպատեալ բերանդ բացէք. և դուք ընդ այլ, և այլն։

3. Եղնկ. բոլոր պտուղ ծառոց. այլք՝ պտուղ երկրի. մանաւոր առժամայն, և աւետիք առ յապա։ Յետ այսորիկ այլ օրինակք չունին զհետեւեալ բանս բնագրիդ, այլ հետեւեալ բանս և բացագանչութիւնս, բովանդակ թուղթ մի. «Ո՜վ հիւանդութիւն՝
» կենդանութեան յոյս, ո՜վ հիւանդութիւն՝ յարութեան նշա-
» նակ, ո՜վ հիւանդութիւն՝ մահու ընդդիմամարտիկ», և այլն, յորս են են խրատք և յորդորակք, այլ ասպարիզօք հեռի յոճոյ բանից Մամբրէի կամ Եղիշէայ։

4. Եղնկ. ի գերեզմանէն։

5. Նոյն. մեռեալս դնէին ի յաշխարհին։

եթէ առանց անուան ասացեալ էր, ո՞ գիտէր եթէ ո՞ր մեռեալ արտաքս դայր, վասն այնորիկ յանուանէ բարբառի. «Ղազարէ, եկ արտաքս». թէ և այլ ոք Ղազար անուն էր անդ, ակնարկութիւն կամաց նորա, զմինն՝ որ Մարիամայ և Մարթայի եղբայրն էր [1], զոր ես սիրեմ, վասն որոյ զիս աղաչեցին և կոչեցին. առ այժմ դու միայն եկ, վասն զի քեւ այլոցն լինի ակնարկութիւն [2] յարութեան: իսկ ըստ զօրութեան Աստուծոյ՝ «Հանցեն ջուրք զեռունս կայտառս շնչոյ կենդանեաց, ըստ ազգի և ըստ նմանութեան». բանն արդիւնագործեցաւ, և առանց ամուսնութեան ջուրքն եղեն ծննդականք. և զթիւ բազմութեանն ի մարդկանէ ոչ ոք կարէ իմանալ: Նոյն ձայն էր և առ գերեզմանին. եթէ ոչ յանուանէ կարդացեալ էր՝ զօրութիւն ձայնին զամենայն գերեզմանսն աւերեալ էր:

Ժամանակ է սերմանելոյ և ժամանակ է հնձելոյ. դեռ եւս սերմանիք սերմանին, բոյսք բուսանին, պտուղք ատոքանան, նոր իրք [3] մատուցանին. Հայր գայ ի հաշտութիւն [4] և Որդի աղաչող, Հոգին բարեխօս: Յորժամ բոլորապատուղ աշխարհս [5] բովանդակեսցին առանց մեր կոչելոյ, ինքնին Տէրն արարածոց հայրենի սկզբնատիպ փառօքն, զօրութեամբ արարող Հոգւոյն [6], բազմութեամբ հրեշտակօք, ձայնիւ անձեռագործ փողոց՝ յերկնից յերկիր իջանէ. աթոռք անկանին, ատեանք ուղղին, դպրութիւնք բանին, ձայնք կենդանիք հնչեն, երկինք գալարին, լուսաւորք ի վայր թօթափին, երկիր դղորդի, վէմք պատառին, գերեզմանք աւերին, մեռեալք յառնեն, յայնժամ և Ղա-

1. Եղնկ. եղբայրդ ես:
2. Ն. ակնկալութիւն:
3. Ն. նուէրք:
4. Ն. հաճութիւն:
5. Ն. բոլորապատող աշխարհիս:
6. Ն. կարող հոգւոյն:

զար յարուցեալ ընդ մեզ տեսանի ։ վերինք և ներքինք միաբան խառնին որոշին, համահաւատք սահմանին, կողմք[1] արդարոց վերաբերին ընդ առաջ Տեառն լինելով, ի վերայ անուշահոտ օդոցն անմահից, կակուղ և փափուկ գարշապարօք. մարդիկ յանհատական կեանս[2] պարուց հրեշտակաց միաբանին ։ Որոց վիցի մեզ ամենեցուն հասանել՝ շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն ։

1. Եզնկ. միաբանին, խառն որոշին. համառօտքն սահմանին, կողմն։
2. Ն. պարս։

ՎԱՍՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՒՈՒՐ ՇԱԲԱԹՈՒ[1]

Վեց շաբաթս այս զվեց հազար դարն նշանակէ. քանզի այս շաբաթս զմեր բնութեանս ունի զյարութիւն և զդատաստան. վասն որոյ գնալն յերուսաղէմ և դղորդիլ քաղաքին՝ զյարութիւն մեռելոցն յայտնէ, որպէս ի Պասեքին շաբաթուօրն հրագալուցին՝ զՔրիստոսի Աստուծոյ մերոյ. զի ի գիշերի զյարութիւնն պատմէ, և չեւ եւս յարութիւն եղեալ, գուշակէ զյարութիւն։ Նմանապէս և ի սմա զհամօրէն մարդկան յարութիւն ցուցանէ, որ լինի ի՝ կիւրակէի, որպէս նախ առաջ յաղագս իւրոյ յարութեանն և ապա յարեաւ. և նախ մարգարէքն գուշակեցին, և ապա Քրիստոս կատարեաց։ Նոյնպէս և տէրն նախ աւետարանեաց. « Եկեսցէ ժամանակ, վերջին օրն, և լուիցեն ձայնի նորա, և եկեսցեն արտաքս »։

Եւ այժմ է, զի օրինակ էր Ղազարու յարութիւնն մարդկային բնութեանս. քանզի կամեցաւ զնախաստեղծին բժշկել զբովանդակ մարմինն, ի փոքրագոյն անդամոցն առնու սկիզբն. զումեմն զգօսացեալ ձեռն, զայլոյ զբորոտութիւն, զուրուք զտեսարանն, և զորդի այրւոյն ի Նային քաղաքի յարոյց, և զդուստր հազարապետին. սակաւ սակաւ և ապա զՂազար ի Բեթանիա, առհաւատ-

1 Զայս ճառ այսպէս առանց անուան օրինակագրի յերկուս Տօնապատճառս գտեալ, յորոյ միումն պակասէր սկիզբն, յարեմք զկնի Մամբրէի ճառին. զի բազում ուրեք նովին իմաստիւք ընթանայ ի բանսն. այլ թէ այս իցէ բուն հարազատ ծնունդ մտաց նորա, և թէ առաջինն, անմարթ է մեզ ճշդիւ դատաստան առնել զայսմանէ. զի թերեւս զկնի ի գրչացն խանգարեալ և անուանն սխալեալ իցէ։ Բայց և զայս գիտեմք, զի և Տօնապատճառք առեալ զայլոց զբանս ըստ կամի յերիւրեն, մերթ յանուն այլոց և մերթ առանց անուան՝ ուրեք զիմաստն պաճեալ և ուրեք յաւելեալ կամ զեղչեալ։ Այլ մեք ժամանակին թողումք հաւաստել զճշմարտութիւնն։

չեայ յարութիւն ամենայն մարմնոց։ Ի չարաթու յաւուր՝ յորում մատնեցաւ Յիսուս, մեռաւ Ղազար, և յաւուր՝ յորում տէրն ննջեաց ի գերեզման, յարոյց զՂազար։ Վասն այսորիկ Ադամ գոհացողական ձայնիւ նուագէ ծննդովք իւր. « Տէր, հաներ ի դժոխոց զանձն իմ, փրկեցեր յայնցանէ որ իջանեն ի գուբ ». զընաւից Նորոգումն մարմնոց։ Իսկ զկատարեալ փրկագործութիւնն և Քրիստոսի չարչարանան և յարութեան պահին. իսկ Ղազարու յարութիւն զկնի քառանիցն՝ ցուցանէ, թէ պահք և աղօթք՝ Քրիստոսի չարչարակից առնէ զմեզ։ Որպէս յարոյցն զՂազար, պահօք և աղօթիւք զհոգիս մեր կանգնեսցուք ի պէսպէս ախտից գլորմանէ։ Եւ քանզի ի տասն ժամուն մեղաք և ի նոյն ժամուն՝ յորում ելաք արտաքս ի դրախտէն, ի նոյն ժամու և տէրն բոլորից էջ ի խաչէն ի գերեզման, ի նոյն ժամու յարոյց զՂազար ի գերեզմանէն։

« Իր ոմն հիւանդ Ղազարոս », որ ըստ եբրայեցւոցն օգնականել ասի. և հիւանդութիւն ըստ իմանալի տեսութեան՝ զմեղացն ասէ զազգի մարդկան, և մեռանելն՝ զմեղացն մահն որ է չար։ Ի Բեթանիայ՝ ի տուն սգոյ ասի աշխարհիս, ըստ նմանութեան յանցաւորութեանն Ադամայ։ Սգակցեն ամենայն արարածք, ողբան հեծեն և երկնեն մինչեւ ցայժմ, զանկեալն Ադամայ ի փառաց դրախտին վայելչութենէ՝ ի կենդանութենէն Աստուծոյ. և Քրիստոսիւ արձակեցաք ի կապանաց մեղացն ի Նորոգումն կենացն ի Քրիստոս Յիսուս։ Ի գեղջէ Մարիամու՝ լուսաւորիչ տէրունական լուսոյն և եկաւորութեամբն։

Այս այն Մարիամն էր որ զամենայն գոյսն վաճառեալ՝ գնեաց զեւղն, որով օծ զոտս տեառն, և լուաց ջրով, և հերով գլխոյն մաքրեաց՝ վասն եղբօրն յարութեան ի տան իւրեանց. « և Ղազար մի էր ի բազմելոցն »։ Ոչ այն պոռնիկն որ ի տուն Սիմոնի բորոտի էօծ զտէրն՝ զոր երեք ա-

ւետարանիչքն ասեն. այլ սա լի մաքրութեամբ և պարկեշտութեամբ, և լաւագոյն առ աստուածայինսն։ Եւ Մարթայ տէրունական ասի եկաւորութեամբն բերկրեալ, որոց եղբայրն հիւանդ էր։ Եղբայր զհարազատութիւն յայտնէ քերցն. վասն սոցա թուի ասացեալն, «Վասն այնորիկ օրիորդք[1] սիրեցին զքեզ», առ ի յօգնել եղբօրն վտանգելոյ։

Սովորութիւն է պատմագրաց, որպէս զիրսն բացայայտեն, այսպէս և զտեղին ցուցանել առ ի հաւատարիմ լինել բանին։ Է՞ր վասն կանանցն և ոչ զՂազարու գեղն կոչէ։ Զի թէպէտեւ հասարակաց էր տեղին, մանաւանդ Ղազարու քան քերցն, այլ կենդանեացն ի դէպ էր զտեղին կոչել քան մեռելոյն։ Իսկ օծանել զոտս տեառն վասն սիրոյն առաւելութեան ըստ երախտագործութեան եղբօրն. իսկ հերոյն ջնջելն, զի ոչ ունէր այլ պատուական քան զգլուխն՝ որով սպասէր կենսաբեր ոտիցն։

Յիսուս յայն կոյս Յորդանանու և փարէր զտեղեաւն, զբոլոր անապատն որսայր ի կենդանութիւն։ «Առաքեցին առ նա քորք նորա», որ նշանակէ զմարգարէիցն դասքն. «Տէր, զոր սիրէիրն հիւանդացաւ»։ Թէպէտեւ դեռ եւս ոչ ունէին կատարեալ հաւատս, սակայն սիրոյն յիշատակաւն խորհէին ձգել զնա ի գութ եղբօրն։ «Իբրեւ լուաւ Յիսուս». լուաւ զգուժ հիւանդին, թոյլ ետ մահուն իշխել նմա և մահացուցանել։ «Այն հիւանդութիւն ոչ է առ ի մահ, այլ վասն փառացն Աստուծոյ»։ Ցուցանէ թէ հիւանդութիւն ոչ ունի իշխանութիւն մահացուցանել զնա, բայց սուղ ինչ ժամանակ, զի քարոզեսցէ զփառսն Աստուծոյ։ Ցուցանէ թէ ի հեռաստանէ կալաւ զերակս հիւանդին, և մանր զննեաց, զճշմարիտ պատմութիւնն արար, և որպէս տէր ի քնոյ զար-

1 Յօրինակին. որիորդք։

թուցանէ իշխանութեամբ զծառայ իւր։ Ի քուն լինելն՝ մարդիկ ոտնահար[1] լինին սիրելեացն՝ ոչ կարացեալ օգնել. ընդոստուցանելն՝ Աստուած փառաւորի ի հայրական փառս իւր, և Որդին ցընծացեալ բերկրի վասն փառացն Աստուծոյ։ Թուի ինձ՝ ի Հայր ձգէ զբանն, որպէս յաղօթելն ի վերայ գերեզմանին՝ վասն ժխտող հրէիցն, որ զնա հակառակ Աստուծոյ անուանէին, և ապա առ Հայր աղօթէ, որ աստուածական հրամանաւն կոչելոց էր զմեռեալն, զՀօր և զիւր կամացն զփառակցութիւն յայտնելով։ Դարձեալ զփառաբանութիւն որ ի ծերոցն և ի տղայոցն լինելոց էր, կանխաւ գուշակեաց։

«Առաքեցին առ նա քորքն»։ Բազում աղերսանօք յղեցին, և մեծ թախանձանօք աղաչեցին, ոչ երկբայութեամբ հաւատացին յարուցիչն մեռելոց ամենից, բայց մարդկաբար փութային՝ մինչ դեռ հիւանդն ոչ էր վճարեալ ի կենաց։ Զի՞նչ դիւրավնասելի քան զմարմին. յաճախագոյն մայթաքէ քան յառողջութեան կայ. զի ոգի որ ելանէ՝ այլ ոչ դառնայ. չարժողն հոգին գնայ և ամենայն մարմինն անկանի ընդ ապականութեամբ, և գոյութիւն մարմնոյն ի հողոյ բնութիւն դառնայ։ Այնր աղագաւ քորքն Ղազարու ալեկոծութեամբ կէին ի միտս իւրեանց. և իբր յԱստուած հաւատացեալ, զոր որպէս բժիշկ ճարտար ի հիւանդն կոչէին։

Զտեղի առ աւուրս երկու, թոյլ ետ աւազակին մնանել ի տուն սիրելոյն, և ապականութիւն և խռովութիւն գործել։ Գոռոզացաւ մահ և զկամս իւր կատարեաց։ «Լուաւ Յիսուս՝ և ասէ»։ Յիսուս ոչ ինչ ետ պատասխանի և ոչ երթալ և բժշկել և ոչ չերթալ և անփոյթ առնել։ Զանուն հիւանդին ասացին, և զփառաց անուն լուան և գնացին տրտմութեամբ։ Կալ մնալ երկու աւուրս՝

1 Մի օրէն. ոտնահար։

զգալատեան ժամանակս առ Նախահարս բացայայտէ. կամ վասն յանդիմանութեան մոլեգնոտ Հրէիցըն, զի հրապարակատես և լուր աշխարհի լիցի մահն, զի աստուածագործ հրաշքն պայծառագոյն երեւեսցին։

« Սիրէր Յիսուս զՄարիամ և զՄարթայ և զՂազար եղբայր նոցա », ըստ այնմ որ առակողն ասէ ի դէմս Քրիստոսի. « Ես՝ որ զիմն սիրեն, սիրեմ, և բաշխեմ պարգեւս բարեկամաց իմոց »։ Զի մինչ տէր յԵգիպտոս իջանէր, սոքա յառաջ ժամանակաւ գնացեալ էին յԱդրիանուպոլիս քաղաք, և բազում սիրով բնաւորեալ՝ բարձողն մեղաց բոլորից զսկզբնակիցն Հօր զմիածինն՝ բարձին ուսովք և կրեցին բազկաւ զկրողն ամենայնի. և ի դառնալ յԵգիպտոսէ տեառն, և սոքա ընդ կուսին Մարիամու և Յովսեփու եկին ի Բեթանիա։

« Եւ Յիսուս ասէ ցաշակերտսն. եկա՛յք երթիցուք ի Հրէաստան »։ Եկն և անդ երկեղ մահուն և չարաչար տագնապեցոյց զնոսա քան զքորսն Ղազարու։ Զի՞ այդչափ զարհուրեալ էք և դողայք. ապաքէն ելանելոց էք ի մարմնոյդ. որ լուայք ի տեառնէ, « Մի՛ երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմինն, և զհոգին ոչ կարէ սպանանել »։ Դա՝ զհոգի և զմարմին ապրեցուցանէ ի մահուանէ, զի ոչ էր իսկ սովորութիւն ծանուցանել նոցա զտեղին ուր երթալոց էր։ « Տէր, ասեն, հրեայքն խնդրեն սպանանել զքեզ, և դու անդր երթաս »։ Զաշակերտսն այսր անդր տարաբերէր. ոչ կամեցաւ զխորհուրդն յայտնել նոցա, զի տեսին զնշան յարութեան՝ և ոչ հաւատացին։ Զերկոտասանամեայ աղջիկն զՅայրոսին դուստրն յարոյց, և զորդի այրւոյն ի Նային քաղաքին։ Որ զմի մեռեալ կարէ յարուցանել, նա և զամենայն ննջեցեալսն. թէ զայլոց մահ հալածական արար, առաւել եւս զձերդ։ Ի լերինն Թափովր ի Հօրէ լուայք, « Դա իմ սիրելի Որ-

դի, դմա լուարուք ». բայց դուք փոխանակ նմա լսելոյ, հրաման տայք նմա, մի՛ երթալ ի Հրէաստան. զՂազարայ խորհուրդ եթէ յայտնեալ[1] էի ոչ հաւատայիք վասն ձեր տկար մտաց։

« Իսկ Յիսուս ասէ, երկոտասան ժամ է աւուրս »։ Զբոլոր օրն յայտնէ. զի օր տեառն որով խաւար կռապաշտութեան լուծանի որ նովաւ գընան. օրն լոյս ասի ըստ եբրայեցի բանիբանիցն. և լոյս Քրիստոս որ լուսաւորէ։ « Որ գնայ ի տուընջեան՝ ոչ գայթակղի ». ո՛րչափ առաւել[2] ձեզ ընդ իս գոլով՝ որ լոյս եմ աշխարհի։ Մի՛ զմարմնոյ աչաց տեսիլդ, ասէ, իմասցիս և որ է երկեղ մարդկան և ամենայն կենդանեաց, տկարքն դողան ի հզօրագունիցն. այլ ես զ'ի հաւատոյ տեսութենէն ասեմ, որ զառյապայն առժամայն տեսանէ. որ զայն տեսութիւն ոչ ունի ի հոգւոջն, թէ և ի միջօրէաւ գնայ՝ գայթակղի, զի զխաւար հանապազ ընդ իւր ուղին։ Սակաւիկ մի կրթելով զմիտս նոցա ընդ բանն արկ զաշակերտսն, մինչև մեռեալն ի գերեզմանն էր։ Ապա ասէ. « Ղազար բարեկամ մեր ննջեաց, երթամ զարթուցանել զնա »։ Իբրև տղայոց կաթն ջամբես, մայրաբար ծնանիս ; և դայեկաբար սնուցանես, և զտգիտութիւն նոցա իմաստութեամբ ծածկես. Ե՞րբ էիր դու սեննեկապետ Ղազարու, որ երթաս զարթուցանես զնա, երկու աւուր ճանապարհաւ հեռի. մի՞թէ յանապակ ըմպելեաց թմրեալ իցէ. կամ ո՞ ոք չորս տիւ և չորս գիշեր ի քուն լինի. քոյրքըն նորա ընդէ՞ր ոչ զարթուցանեն։ Գառինք անմեղք էին աշակերտքն, զոր ինչ տեսանէին՝ զնոյնպէս գիտէին, և զոր ինչ լսէին՝ նմին և հաւատային. յաստուածային խորհուրդն հասու լինել ոչ կարէին։ Աստ յայտնէ զգնալն ի Բեթանիա և

1 Յառաջին օրէն. զՂազարու յարուցեալն զխորհուրդն ի վեր հանեալ էր ձեզ, դուք ոչ հաւատայիք։
2 Յօրինակին. առաւ։

ոչ յԵրուսաղէմ, զի զերկեւղն ի մտաց նոցա փարատեսցէ, այլ զարթուցանելովն զխնամսն որ առ Ղազար՝ յայտնէ։

« Տէր, եթէ ննջեաց, ապա ապրի »։ Բազում հիւանդք ննջեն, և ոչ ապրին, և իցեն որ ոչ ննջեն և ապրին։ Ո՛ փաղաքշանք տգիտացն, զծածկատեան կամէին սփոփել. գիտէին աշակերտքն թէ սիրէ տէր մեր զՂազար անմեղ, և ոչ կամէին թէ վիշտ հասցէ ընտանեաց նորա։ Աշակերտքն զննջելն՝ ապրելոյ և առողջութեան վարկանէին. տէրն մերկացու զծածուկ խորհուրդն և յայտնապէս ասէ, « Ղազար բարեկամ մեր մեռաւ »։ Ջի մի՛ յանկարծակի ընդոստիցեն ճչելով կամ կոծելով։ Իսկ Յիսուս ասէր, մեռայք որով ըմբռնեալն էր ազգ մարդկան, այսինքն օրինօքն. զի Քրիստոսիւ փոխելոց էին յանմահութիւն, յարութեամբն Ղազարու որ էր գաղափար հանդերձելոցն։

« Ես ուրախ եմ վասն ձեր, զի դուք հաւատացէք զի ես չէի անդ »։ Պատիպատ խօսք, որ ոչ կարացին 'ի վերայ հասանել իրին. մահու անուն և ուրախութեան 'ի լսելիս նոցա հնչակեցաւ, և զարմացմամբն ոչ կարէին հասու լինել վասն երկշաւիղ բանիցն. բայց երկչոտն Թովմայ տեղեակ առնէ զմեզ վասն տխմարութեան նոցա։ Ոչ ի պարծանս ինչ յարուցանեմ զնա, այլ վասն ձեր հաւատոց հաստատութեան. ուրախ եմ զի առնուցուք զչափ իմոյ զօրութեանս։ « Ասէ Թովմաս, եկայք՝ զի և մեք մեռցուք ընդ նմա »։ Սա երթայ զմեռեալն յարուցանել, և մեք կենդանիքս պատրաստիմք ի մահ. քանզի տարակուսեալ էին յայս տեղւոջս։ Երկրագործ մշակաց դիւրագոյն է զկորդացեալ երկիր վարել, քան գիտնոց զտգէտսն ածել ի հաւանութիւն. երկրագործ սակաւ աշխատի ընդ ամեհի երկիրն, և բազում պտղոց ակն ունի. իսկ մարդ կոյր տգիտութեամբ՝ Աստուծոյ միայն է կարողութիւն ի գիտութիւն ածել։ Որչափ թերեհաւատութիւնն զօրանայր, յամենայն կողմանց

ուրախութիւն լինէր. զբոլորիցն անհաւատութիւն հայրենի զօրութեամբ հզօր գործեաց։

«Եկն Յիսուս և եգիտ զՂազար չորեքօրեայ ի գերեզմանին»։ Զի մերձ էր գեւղն յԵրուսաղէմ, և սուգն մերձ էր յուրախութիւն և ի խաղաղութիւն, ասպարիսաւ հնգետասան. ասպարէսն երկու մղոն է ճանապարհի, մինչ յԵրուսաղէմ։ Ի ծննդենէն կրկին թուօք մինչեւ ի խաչելութիւնն՝ երեք հնգեաշարժ զգայութեամբ, տեսանելեօք, լսելեօք, հոտոտելեօք, ճաշակելեօք և շօշափելեօք, զորս միացոյց ընդ իւր էութիւն, որ համբարձաւ յերկինս. ընդ ԱմԻԱ յարցյ և ըստ ՆմԻԱ Աստոյց ընդ Հօր։

«Բազումք ի Հրէիցն եկեալ էին առ Մարթայ և առ Մարիամ»։ Գային աստուածային տեսչութեամբն իմանի գոլ, զի տեսողք լիցին աստուածագործ նշանացն. զի ոմանք օգտեցան հաստատելով ի Քրիստոս հաւատով խարսխեալ. զի մխիթարեսցեն զնոսա։ Ագարակն քաղաքացեալ էր, և քաղաքն ագարակացեալ, բոլոր ամբոխ քաղաքին եկեալ էին ի վիշտն. զի է բնութեան սովորութիւն, զբօթ սիրեմք լսել զայլոց, և մտանել ի տուն սգոյ՝ քան ուրախութեան. ոմն ի լրկտութիւն և ոմն յատնհարութիւն, և յոլովք ի չատխօսութիւն. սակաւք լինին կցորդք տրտմութեան, զի ի մէջ Երուսաղեմի գործելոց էին զբաքանչելիսն։

«Մարթայ իբրև լուաւ թէ Յիսուս գայ, ընդառաջ գնաց Նմա»։ Մարթայ յառաջանալ ըստ օրինացն և մարգարէիցն, որ գուշակեալ ցուցանելոց էր զՔրիստոս փրկիչ աշխարհի։ Մարիամ անդրէն նստէր ի տանն. մինն եղեւ իբրեւ՛ զբան բերանոյ, և միւսն իբրեւ զսիրտ շտեմարան խորհրդոյ. սիրտն ի տեղւոջն հաստատուն եկաց, և բանն յառաջ ընթացաւ պատմել զպաղատանս սրգաւոր սրտին ի լսելիս այնորիկ՝ որ կարող էր բառնալ զսուգ ի տանէ սիրելեացն իւրոց։ Մար-

թայ որ է բան, գիտաց թէ ամենայն մխիթարիչքն որ ժողովեալ էին՝ նոցա անձինքն լի են տրտմութեամբ. տրտում զտրտում ոչ կարէ զուարթացուցանել, և սգաւոր զսգաւոր ոչ մխիթարէ։ Մինն ասէր. Մի՛ տապիր. եղբայր իմ վաղ մեռաւ տղայ. և այլքն ըստ իւրաքանչիւր կարևորացն ասեն զմահն տարաժամ, և զսիրտն բեկանեն, և զաղխն գալարեն, վայ ի վերայ վայի։ Զայս ամենայն եթող Մարթայ և ասէ ցՅիսուս. «Տէր, աստ լեալ էիր դու, եղբայրն իմ ոչ էր մեռեալ»։ Մարգարէացաւ Մարթայ։ Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի, զվարձս մարգարէի առցէ, իսկ որ զԱստուած ընդունի, զփառս աստուածային ժառանգէ։ Երկնաւոր իմաստութեամբն առաց զայս, և յաստուածային փառսն վերացաւ. զի ուր կենդանութիւն է՝ անդ մահ ոչ մտանէ. Տէրն բազում անգամ մտեալ էր ի տունն Մարթայի և Մարիամու, և զմահն ի գեւղջէն հալածական առնէր՝ թող թէ ի տանէն։ իմաստութիւն հոգևոր, և սէր աստուածային, և հաւատք ճշմարիտ, և ստոյգ մարգարէութիւն, չորք եղբարք են հարազատք. քանզի մի է չարժողն սոցա Աստուած։ Որպէս արուեստաւորն մի բերան փչէ յերգիոնն, և բազում փողքն, ոմն սուղ, ոմն թաւ, ոմն թանձրագոյն, մի ձայն տայ. այսպէս և Մարթայ և Մարիամ և Ղազար, և թէ այլ ոք էր ի տան նոցա, մի հաւատք էին ամենեցուն, մի սէր սիրեցին զՔրիստոս, մի հոգևոր իմաստութիւն էր ամենեցուն։

«Արդ գիտեմ, զոր ինչ խնդրես՝ տայ քեզ Աստուած»։ Մարգարէացաւ կինն, ոչ զմիոյ մեռելոյ յարութիւնն, այլ զդարուցն կարող ես յարուցանել կամակցութեամբ Հօր և Հոգւոյն։ Տէրն ասէր. «Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ». այս զմիտս լսողացն հաստատէր։ «Եւ ոչ ոք գիտէ զՀայր, բայց Որդի, և ոչ ոք զՈրդի ճանաչէ, բայց Հայր». այս բան զմիակամութիւն և զմի բնութիւն ցու-

ցանեն, և ոչ երիցութիւն[1] և կրսերութիւն. վասն այսորիկ Քրիստոս հաճեցաւ ընդ հաւատս Մարթայի։

«Աւէ ցնա Յիսուս, յարիցէ եղբայրն քո»։ Տէրն յայտնեաց Նմա զառաջին յարութիւն եղբօրն իւր և զյետինն։ Ոչ պէտք են աղաչանաց, և ոչ կարծիք հայցուածոց, որպէս ոմանց թուի։ «Գիտեմ զի յարիցէ յարութեանն յաւուրն յետնումն»։ Դրունք երկնից բացան կնոջն. զինքնածագ լոյսն եսես կինն աչօք. յանմատոյց տեղին եհաս. որդւոյն Զեբեդեայ հաւասարեաց. ոչ զմարմնոյ լանջօքն Քրիստոսի անկաւ, այլ իմաստութեամբն[2] զօրացաւ յԱստուծոյ. զԲանն կենաց շօշափեաց, ի կեանս Աստուծոյ փոխեցաւ. մտաց աչքն բացան. լուսաւորեցաւ ներքին մարդն. եկն արտասուօք, լցաւ ծաղու. մշտացեալն բերկրեցաւ. զուարթացաւ գոյն երեսացն. աւետիս լուաւ յարութեան. մինչ չեւ յարուցեալ՝ եսես զեղբայրն, զի զկենդանացուցիչն եսես ամենայն մեռելոց։

«Ես իսկ եմ յարութիւն և կեանք»։ Եղիտ յարոյց զմեռեալս, և դարձեալ մեռան. Եղիսէ երկուս. ես յարուցանեմ և կեցուցանեմ յանմահութիւն։ «Որ հաւատայ յիս, թէպէտ և մեռանի, կենդանի է, և որ հաւատայ յիս՝ մի՛ ճաշակեսցէ զմահ յաւիտեան», որպէս ի մօտոյ տեսանելոց ես. այսպէս և յիս հաւատացեալքն փըրկին ի յաւիտենից մահուանէն։ Զի յոյժ բարձրագոյն ճառեաց Փրկիչն, վասն այսորիկ զվարձ վարդապետութեանն խնդրեաց ի Նմանէ. «Հաւատա՞ս այսմիկ զոր լուար»․ թէպէտ երկչաւիղ էր բանն, սակայն յուսայր Նա. ասէ, «Այո, տէր, ես հաւատացի թէ դու ես Քրիստոս որդի Աստուծոյ, որ յաշխարհ գալոց էիր»։ Զմարգարէիցն բանն երկրորդեաց, որպէս չամարտայի[3] կինն

1 Մի օրին. իրիցութիւն։
2 Մի օրին. միաւնութեանն։
3 Մի օրին. շամրտացի։

ասաց, «Յորժամ Մեսիայ գայ, նա պատմեսցէ մեզ զամենայն»։ Ասաց զկուսական ծնունդն, և ակնարկեաց զերկրորդ գալուստն. զամենայն ինչ տեղեկացաւ և զմեծամեծսն Աստուծոյ լուաւ։ Եկն իբր մարդ տրտում, և գնաց իբր հրեշտակ Աստուծոյ ուրախացեալ. կոչեաց զքոյր իւր լռելեայն. աշակերտեայ ի նոյն վարդապետութիւն հեշտակամ, դիւրահաւան ակնարկելովն վասն հրէից. զի և քոյրն զնոյն մաղթանսն արկցէ առաջի՝ ի գութ ածելով զՔրիստոս վասն եղբօրն կենդանութեան. և Մարիամ զնոյն բանս քեռն երկրորդէր. ասէ. «Վարդապետ եկեալ է և կոչէ զքեզ»։ Արդարև ճշմարիտ վարդապետ, առանց ալփափետաց ուսուցանէ, զամենայն պէտս դպրութեան կատարէ. ասաց վարդապետ, և ինքն եմուտ ի կարգ աշակերտացն։

«Իբրև լուաւ՝ յարեաւ վաղվաղակի և եկն առ Յիսուս». ի նոյն տեղի և ի նոյն ուրախութիւն, առ նոյն ուսուցիչն. զոմն ի ծածուկ և զոմն յայտնի՝ ձգեաց զերկոսեանսն ի սգաւոր աշխարհէս՝ յանտրտում ուրախութիւն կենացն։ Յիսուս չև էր եկեալ ի գեղն. այլ կայր ի տեղւոջն ուր ընդառաջ եղև նմա Մարթա։ Է՞ր վասն արգելոյր զինքն և ոչ փութապէս գայր ի գերեզմանն. այլ զի ի հասանել համբաւ գալստեան նորա, զի ատեան գործեսցէ ժողովրդեանն, և ամենայն ոք ճեպեսցի առ ի տեսանել զսքանչումն աստուածագործ նշանացն. զի ի լռել մարդոյն ի պատուիրանապահութենէն Աստուծոյ, լռէր և աստուածագործ հրաշքն յերկրէ. և մերկացաւ մարդն յաստուածատուր փառացն վասն յանցանացն. աստ յաղագս Ղազարու զհրամանն Աստուծոյ պահելոյ, կենագործէր ի գերեզմանէն։ Իսկ հրեայքն որ եկեալ էին մխիթարել զնոսա, ինքեանք թափուր յերկնային յուրախութենէն մնացին, սգով թաղծեալ նստէին ի տան, յառաջին յարտասուսն շա-

զախեալ[1] և նովին տրտմութեամբն։ « Իբրեւ տեսին զՄարիամ զի յարեաւ, գնացին և նոքա ընդհետ »։ Ոչ առ ի յարութեանն տեսութիւնն, այլ ի գերեզմանն մեռելոյն։ « Զի որում տուեալ է յաւելցի, և որում ոչ է տուեալ, և զոր ունի՝ հանցեն ի նմանէ »։ Ոչ առ ագահութիւն տուողին, այլ վասն անարժանութեան ընդունողին, որպէս առաքելոցն և Յուդայի տեսանի։ « Համարէին թէ ի գերեզմանն երթայ, զի լացցեն անդ »․ զի հանապազ գերեզմանաւորք էին, ոչ միայն զմարդիկ մեռեալ, այլ և զսուտ աստուածս ասէին մեռեալ․ « Եւ նստեալ լային զԹամուզ », մարգարէն ասէ։

« Եւ Մարիամ եկն առ Յիսուս »։ Մարիամ ի նոցանէ մերժեցաւ, և եկն առ այն որ յառաջն ճանաչէր, թէ որ զբազում մեղս իմ եթող ձրի[2], կարող է զծանր տրտմութիւնս փարատել։ Անկաւ առաջի ոտիցն Յիսուսի, և ասէ․ « Տէր, աստ լինեալ էիր, եղբայրն իմ ոչ էր մեռեալ »։ Միոյ դպրոցի մանկունք, մի լեզու խօսէին․ միաբան ըստ վարդապետին կամացն յօրդորէին յուսումն աստուածային։ Նոյնպէս և երկու քորքն ի մի որս կենդանիքն[3] ըմբռնեցան․ զմի սէր սիրեցին զտէրն․ ի մի աղբիւրէ արբին զջուրն կենդանի․ տեսին մարդացեալ զԱստուած, հաւատացին ի տէր բոլորից։ Թուի թէ խորհեալ էին ածել զՅիսուս՝ եղբօրն ի կենդանութիւն գործել․ յերկուցն միաբարբառ լինի վասն մերձաւոր մեռելոյն ասելով, տէր, թէ չէիր անտես արարեալ զազգ մարդկան, ոչ մեռանէին զմեղացն մահ։ « Զի մեք մեղաք և դու բարկացար », ասէ ոմն ի մարգարէիցն, առ ի պարկեշտութիւն վարուց և ի սքանչելի խրատուցն։

1 Մի օրին. շաղեալ։

2 Աստ հակառակաբանէ գրիչն, զի յառաջագոյն, յերես 36, այլ է ասաց զայս Մարիամ ի մեղաւոր կնոջէն, զոր երեք աւետարանիչք յիշատակեն, և այժմ նոյն համարի զսա, որպէս և յերեսն 57։

3 Այլ օրին. ի մի որս կենդանի երկնաւոր ըմբռնեցան։

« Յիսուս ետես զնա զի լայր, և որ ընդ նմայն էին լային »: Յաշխատել մարմնոյն բխեն քըրտունքն, և ի զայրագին սրտէ հեղուն արտասուս ի վերայ մեռելոյն, և ի կենդանի սիրելոյ յորժամ ի հեռաստանէ եկեսցէ: Ետես Մարիամ զՅիսուս; և երկունք գթոյն ստիպեցին զնա յիշատակաւ մեռելոյն. այլ ոչ ճչեաց ըստ աշխարհիս կարգաց, այլ ցնծութեամբ եհեղ զարտօսր առաջի ողորմածին. այնչափ աղիողորմ տեսլեամբ, մինչեւ զհրեայն բարձրականն լացոյց: Խռովեցաւ ի հոգի, իբր թէ ամենայն զօրութեամբ տրտմեցաւ. ոչ կարաց պարզաբար ասել ուր եդիք, այլ մռընչելով ասէ, կիսաբան տրտմակից ի վերայ սիրելոյն: Յորդահոս անձրևաց առատաբեր լինին անդք, և բուսուցանեն դալարիս պտղականաց. Նոյնպէս և յորդ արտասուք մարդկան ի գութ ածեն զԱստուած: Եղեւ կցորդ սգոյ նոցա, զի լիցին մարդիկ մխիթարեալք յԱստուծոյ: Կամ մռնչեաց ի վերայ սատանայի որպէս առիւծ ի վերայ որսոյ. զի ոչ ստուգապէս կարէին շարժել զնա տրտմականքն, որպէս զմեզ յաղթահարեն մարմնոյ շարժմունք. զի աստուածային բնութիւն անախտ և անտրտում է. այլ խռովելն նշանակէ, թէ հրաման ետ տրտմութեանն գալ և բխել զարտօսրն կամաւորաբար: Ցուցանէ, թէ յորժամ կամէր՝ զիջանէր յայնոսիկ ի բնական կիրսն, յայտնելով զճշմարիտ մարդեղութիւնն. զի թէպէտ և Աստուած միացաւ ի մարմնի, այլ ոչ ետ շարժել մարմնոյն ի բնական կիրսն, այլ յորժամ թոյլ տայր իջանէր ի կերակուր և յըմպելիս և ի քուն. և յորժամ կամէր՝ անցանէր որ բնութեանս գեր ի վերոյ. պահէր զինքն աստուածային միութեամբն:

« Ասէ. ո՞ւր եդիք զնա. ասեն, եկ և տես »: Ոչ անգիտութեամբ. որպէս Հայր նորա հարցանէր, « Ո՞ւր ես Ադամ », և ցԿայէն՝ « Ո՞ւր է Աբէլ եղբայր քո », և ցՄովսէս՝ « Զի՞նչ է այդ որ ի

ձեռին քո է »։ Խնդրէ արարիչն զիւր պատկերն, որ ըստ պատկերի իւրոյ արար զնա, և չարն նախանձեցաւ ընդ բարւոյն Ադամայ, և ընկէց զնա յերանելի կենացն. տէրն եկեալ որսայր զմարդկան փրկութիւն։ Ի Բեթանիայէ մինչև ի Բաթաբրէ եօթանասուն և երկու մղոնք են, յայնչափ հեռաստանէն գիտացեր զմահն Ղազարու, և մօտ ի կարմջիդ անգիտանա՞ս։ Դիր եդիք դուք, և ես կենդանի առնում զնա. դագաղզք տարայք, և ես ձայնիւ յարուցանեմ։ Ապա զիարդ հարցանես, տէր։ Այսէ, աստուածային հրաշս գործելոց եմ աստ ի տեղւոջս, գուցէ զրկեսցին մարդիկ։ Երկու կողմանց զգուշանայ, հոգւոց և մարմնոց, վասն զի Աստուած էր մարդացեալ. այլ զի ինքեանք ցուցցեն և վկայ լիցին մեռելոյն և տեղւոյն։ Արտասուեաց Յիսուս։ Մարմնոյն ոչ միայն աչքն արտասուեն, այլ բոլոր մարմինն քրտնի, որով տէր մեր բազում անգամ վարեցաւ յաշխարհի, մինչև ի նուազագոյն պէտս. զի զազգակցութիւնն իւր ի մեր[1] վշտակցութիւնս ցուցցէ։ Դարձեալ՝ զի սահման և կէտ զայն վարդապետէ, այնքան արտասուել հաւատացելոց, որք զյարութեան յոյս յինքեանս ունիցին։ Դարձեալ՝ զի տեսանելով զմեռեալն, պարտ է արտասուել ի վերայ մարդոյն, որ ի սկզբանէ ժառանգեցոյց ազգի մարդկան։ Կամ ի վերայ հրէիցն արտասուեաց, որ յետս կալոց էր յաստուածագործ նշանացն թերահաւատեալք, և գեհենոյն ժառանգ լինելոց էին։

« Հրեայքն ասեն. տեսէք ո՛րչափ սիրէր զնա, զի ինքեամբ արտասուեաց. կէսքն ասեն. ո՞չ կարէ սա՝ որ եբաց զաչս կուրին, առնել՝ զի և սա մի՛ մեռցի »։ Դուք սովոր էք հայհոյել. որ զծովն բաժանեաց և զբազում նշանս արար, հայհոյեցէք և ոչ գոհացայք զԱստուծոյ, և անասնոց փոխանակեցէք, և ի Մովսէս երդմամբ ուրացայք։ Որ

1 Այլ օրին. 'ի վեր։

ընդ ծովս ճանապարհ արար, զբոլոր ժողովուրդն ի բերանոյ սրոյն փարաւոնի ապրեցոյց, չկարայք չնորհ, զի վասն կուրին բժշկութեան շնորհակալ լինիցիք։ Հոգի կուրին կենդանի էր և շարժէր զմարմինն, և աչք կուրին մեռեալ էր. շունչն ի մեռեալ մարմինն ոչ բնակէր, և ոչ լոյս արեգական ի մեռեալ աչս[1]. Թէ զմեռեալ աչս կենդանացոյց, և զլոյսն հրաժարեալ անդրէն դարձոյց, ապա և զբոլոր մարմինն կենդանի առնէ։ Բայց դուք ի կամս ձեր յաճախեցէք ի հայհոյութիւն. Թերևս ի նմին տեղւոջ ամաչէք, յորժամ բազումք ի ձէնջ փառաւոր առնէին զիմ աստուածութիւնս ի վերայ մեծամեծ սքանչելեաց զոր տեսանելոց են։

« Ցիսուս դարձեալ զայրացաւ ի միտս իւր »։ Անդ ասէ, թէ խռովեցոյց զանձն իւր կոչելով յինքն զարտօսրն, և աստ սաստէ[2] բնութեանն դադարել ի շարժմանէ տրտմութեանն, զոր կոչեալ խռովեցոյց։ « Ցիսուս գնաց ի գերեզմանն Ղազարու, և էր այր մի և վէմ մեծ եդեալ ի վերայ այրին »։ Սովորութիւն էր առաջնոցն ամրացուցանել զգերեզմանս, վասն զի հեռի էր ի նոցանէ յոյս յարութեանն։ Զայս՝ կեանք համարէին, և զայն՝ դառնութիւն մահու. յիշատակ մեռելոյն զչիրիմ համարէին, և զանուն մեռելոյն ի վերայ գերեզմանին փորագրէին. և Մովսէս ակամայ թոյլ տայր սովորութեանն[3]։ Եղբայր անորդի մեռեալ, առնոյր զկինն եղբայրն, և յարուցանէր զաւակ յանուն մեռելոյն վասն ժառանգութեան երկրին վիճակելոյ։ Կամ վէմն կափարիչն՝ նշանակէ զսատանայ, որ ի վերայ դժոխոցն զհոգիսն փակեալ ընդ իւրով իշխանութեամբն պահէր։

1 Յօրինակին. շունչն ի մեռեալ մարմինն բնակէր. իսկ լոյս ա-րեգական ի մեռեալ աչս ոչ բնակէ. զոր յայլ օրինակաց ուղղեցաք։
2 Յայլ օրին. ասէ։
3 Յայլ օրին. և Մովսէս ակամայ ի տարւոջ անդ խոնարհի ի սովորութիւն առաջնոցն։

Ցիսուս ասէ. « Ի բաց առէք[1] զվէմդ ի բերանոյ այրոյդ »։ Ցորմէ երկիր դողայ, և լերինք հալին, վասն փոքր մի վիմիդ օգնական խնդրես ի մարդկանէ։ Վկայ կոչեմ յարութեան, դուք առէք զքարդ ի վեր, և հայեցարուք ի գերեզմանդ. աչք ձեր վկայ լիցին, և թիկունք՝ ծանրութեան վիմիդ, և հոտ նեխոյդ ունգացդ որ ի մօտ կայք ամենեքին։ Գիտէր զնոցա չար սովորութիւնն. յամենայն կողմանց զգուշանայր արգելուլ զհայհոյութիւնն։ Զի՞նչ պէտք էին բառնալ զվէմն, որոց հրամանաւ դժոխք փախելոց էին զմեռեալս։ Այլ վասն ժխտող հրէիցն, թէ զսքանչելիսն ուրանան, ձեռք նոցա դատախազք գտանին յանդիմանելով զնոցա թերահաւատութիւնն։ Կամ վէմ՝ զբուռն ծանրալուծն սատանայ պահակն մեղաց, որ արգելեալ պահէր ընդ մահու իշխանութեամբ զմեղաւորսն։ Տէր բառնայ զվէմն, զբռնակալութիւն դիւացն, զի դիւրաւ յարիցեն ի մեղացն մարդիկ զկնի Քրիստոսի գալստեանն։

« Ասէ Մարթայ քոյր մեռելոյն. Տէր, արդ հոտեալ է »։ Նախաստեղծին բերէ օրինակ, և մեռելութիւն և նեխութիւն ըստ մարգարէին։ « Նեխեցան և փտեցան վէրք իմ »։ Եւ այլ մարգարէքն ամբաստանեն վասն ազգի մարդկան, զմեղացն ժահահոտութիւն բացայայտեն արարչին, իւրաքանչիւր ըստ իւրում բանին. զի ամենայն աշխարհ առ հասարակ նեխեալ էր։ Հոտ նեխոյ՝ մարդոյ գայ ի մեռելոյ, իսկ Աստուծոյ՝ ի մեղաւորէն. իսկ Աստուած յիւր անուշահոտութենէն համեմեաց զամենեսեան։ Մշակին ոչ գոյ հոտ նեխոյ ի սերմանեացն, զի լի են միտք իւր խնդութեամբ, զի պարարեալ են խելք ի հոտոյ անդաստանաց իւր. և Իսահակ ասէր. հոտ որդւոյ իմ՝ որպէս անդաստանի լիոյ[2]։ « Քանզի չորեքօրեայ է »։ Չորեք-

1 Յայլ օրին. արարէք։

2 Յայլ օրին. որում և սակաւիկ մի եւս վկայութիւն և Իսահակ ի զննել իւրում և յօրհնել զՅակոբ։ Այլ օրին. ի զ նել իւրու զԵսաւ և զարդարութիւն տայ Յակոբայ։

նիւթեան բնութիւնս[1] մարդկան, թուի թէ զչորեքեղերեան աշխարհս նշանակէ. զի ամենեքեան մեղան և նուազեալ են ի փառացն Աստուծոյ։ Բազմօրեայք ընդ չորեքօրէին յարոյց Քրիստոս ի մեղացն ապականութենէն։ «Ասէ ցնա Յիսուս. հաւատամ և տեսցես զփառս Աստուծոյ»։ Ո՛վ Մարթայ, այտի բուսանելոց են անապական[2] կեանք մարդկան, միայն հաւատամ յԱստուած, և հարկանի քեզ հոտ անուշ կենդանի, և զփառսն Աստուծոյ տեսանես. և պապանձին բերանք հայհոյիչ մարդկան, յորժամ զչորեքօրեայդ մեռեալ՝ կենդանի տեսանիցեն[3] ի հրապարակիդ. աղ է դա, անուշացուցիչ է ամենայն հարեալ մարմնոյ. և լոյս է դա թափանցիկ կուրացեալ աչաց, և ձայն է խըլացեալ ականջաց, զոր գործով առ եղբայր քո տեսանես, և մտօք զփառսն Աստուծոյ իմանաս։

«Իբրև ի վեր առին զվէմն»։ Մինչ չև զվէմն ի վեր առեալ էր, Ղազար յարուցեալ էր ի գերեզմանէն. ոչ է արժան գերեզման առնել, այլ յարութիւն անուանել։ «Ամբարձ զաչս իւր յերկինս»։ Մինչ չև զաչս Յիսուս յերկինս համբարձեալ էր, զՀայր տեսանէր։ «Հայր, գոհանամ զքէն, զի լուար ինձ. գոհանամ զքէն, Հայր; զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի գիտնոց, և յայտնեցեր տղայոց անմեղաց»։ Մինչ չև ձայնիւ կարդացեալ էր, Հայր լսէր նմա յամենայն ժամ։

Ամաչեսցէ Թէոդորիտոս և նմանք նորա հերձուածոցն, որ ասէր, թէ ոմն կարդայ և ոմն լսէ. բան լի յիմարութեամբ, ո՛վ անիրաւ։ Ի տան քահանայապետին յարոյց զդուստրն նորա ի մեռելոց, ոչ աղաչեաց և ոչ յերկինս հայեցաւ, և ոչ առ Հայր կարդաց. հայեցաւ ի մեռեալն և ասէ. «Տալիթա կումի, աղջիկ դու՝ քեզ ասեմ արի՛ կաց. և կանգնեցաւ ողջ». Նոյնպէս և ի Նային քա-

1 Յայլ օրին. բնութեանս։
2 Յայլ օրին. անանցական։
3 Յօրինակին տեսանի։

ղաքի բաղում ամբոխ էր, և ոչ ոք թախանձեաց զնա, և ոչ առ Հայր կա՛րդաց. ձեռն միայն ձգեաց ի դագաղսն, և մեռեալն կանգնեցաւ, նոյնպէս և յայլ նշանսն։ Ուր անձամբ առնէր, զաստուածային զօրութիւնն յուցանէր. ուր առ Հայր աղաչէր, զսիրելութիւն ցուցանէր. քանզի երանելի բնութեան սրբոյ Երրորդութեանն բնութիւնն, անսահմանելի միապէս յերիս անձինսն, ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ։ Իսկ յատկութիւնն յիւրաքանչիւր յերեսս բաժանին և ի դէմս. քանզի բնութիւն երեցն այս է. Տէր Աստուած ամենակալ ամենախնամ, արարիչ անիմանալի, անպարագրելի, անորակ, անքանակ, անուր, աներբ, ոչ սկըսեալ և ոչ դադարեալ։ Իսկ առանձնաւորութիւն Հօր՝ ծնող և պատճառք, անսկիզբն և սկիզբն, և ոչ սկսեալ յումեքէ, առաքող, ոչ ծնեալ յումեքէ և ոչ արարեալ[1] կամ յինքենէ կամ յայլմէ ումեքէ։ Իսկ Որդւոյ առանձնաւորութիւնն՝ որդի, բան, ծնունդ, լոյս, կերպարան, իմաստութիւն, ճառագայթ, պատկեր, կնիք, նկա՛րագիր։ Իսկ Հոգւոյն սրբոյ առանձնաւորութիւնն՝ բղխումն ճշմարիտ, նորոգող, մխիթարիչ, ուղիղ, բարի։ Ի Հօրէն Որդի և Հոգին սուրբ, այլ ոչ կոչին եղբարք և ոչ որդիք երկոքեանն. զոր օրինակ յԱդամայ են Սեթ և Եւայ, այլ ոչ եղբարք և ոչ որդիք երկոքեան։ Քանզի Հայր ծնող է, և Որդին ծնունդ, և Հոգին սուրբ ելող է. և նստի Որդի ընդ աջմէ Հօր, և Հոգի սուրբ ընդ աջմէ Որդւոյ։ Քանզի ի հարիւրերորդի ինններորդի սաղմոսին ասէ. «Ասաց տէր ցտէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ». Հայր զՈրդի ասէ. և յետ սակաւուց ասէ. «Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի, և տէր ընդ աջմէ քումմէ». Հայր ընդ Որդւոյ վասն Հոգւոյն սրբոյ ասէ։

Եւ արդ ոչ մեծ և ոչ փոքր[2] ի սուրբ Երրոր-

1 Յայլ օրին. կատարեալ։
2 Յայլ օրին. ոչ մեծութիւն և ոչ փոքրկութիւն։

դութեանն երեւի. զի զմեծ և զփոքր, զծանր և զթեթեւ, զշատ և զսակաւ՝ ժամք և ժամանակք բովանդակեն. իսկ ուր ոչ ժամք և ոչ ժամանակք, ոչ չափ և ոչ կշիռ մերձենայ յանքաւելի բնութիւնն, անդ ոչ նկարի ոչ փոքր և ոչ մեծ: Կամեցայ զՀայր մեծ ասել որպէս զծնօղ և զպատճառ, այլ երկեայ նոյն ինքն ի Հօրէ. զի մի՛ տկար զակիզբն արարից և թշնամանեցից մեծարանօքն. քանզի ոչ են փառք Հօր, թէ որ յինքենէ են՝ փոքրագոյն են քան զնա. քանզի այս տկարութիւն գործի [1], ոչ կարել իւր հաւասար Որդի ծընանել, կամ Հոգի բղխել. այլ վայելէր նորա հրաշափառ զօրութեան, զի որ ի նորա բնութենէն՝ ինքեան փառակից գոլով ճանաչին: Արդ Հայր ոչ ծնունդ և ոչ ելող, և Որդի ոչ ծնող է և ոչ ելող, և Հոգին սուրբ ոչ ծնող է և ոչ ծնունդ, այլ միշտ զելողութիւնն ունի: Ցնծայ Հայր ընդ փառս Որդւոյ, և զուարճանայ Որդի ընդ պատիւ Հոգւոյն, և փառաւորէ Հոգի զՀայր և զՈրդի, զի ի նոցունց էութենէն առնու և նորակերտէ զարարածս, յորմէ ամենայն եղև յերկինս և յերկրի, երևելիք և աներևոյթք, զգալիք և իմանալիք, մարմինք և անմարմինք: Արդ զայս դաւանութիւն ընկալան Հայք ի մեծէն Գրիգորէ և ի սրբոյն Ռստակիսէ և յերանելւոյն Ներսիսէ:

« Վասն ժողովրդեանս առնեմ »: Մեկնութիւն առնէ ինքն, զի Աստուած ոչ հայի յիւր պատիւն, որպէս ի մեր փրկութիւնս. զի յորժամ զինքն հաւասար Աստուծոյ առնէր, և զմեղս թողոյր, նոքա հայհոյիչ և դիւահար կոչէին. « զի հաւատասցեն թէ դու առաքեցեր զիս »: Թէ հակառակ Հօր զիս գոլ ասէք և հայհոյիչ, մի՛ լիցի գործակից հակառակողիս. կոչեմ զքեզ ի գործակցութիւն՝ հաւատացելոց ի հաստատութիւն, և անհաւատիցն յանդիմանութիւն: Ընդ անքաւելի մեղօք են, որ

1 Ցայլ օրին. այս տկարութեան գործ է:

յանբաժանելի բնութիւն՝ բաժինս արկանեն. ի մարդկանէ հայհոյին և յԱստուծոյ դատապարտին, և ջնջին ի դպրութենէ կենացն։

«Զայս իբրև ասաց Յիսուս, ի ձայն մեծ աղաղակեաց»։ Աղաղակեաց վասն մարդկան, զամենեցուն լսելիս և տեսանելիս առ ինքն ձգելով։ Հեռի եկաց ի գերեզմանէն կանգունս երկոտասան՝ չմերձենալով ի մեռեալն։ փոխանակ ձեռինն զձայնն սաստկացոյց, կատարեաց զօրէնսն որ ասէ. «Որ մերձենայ ի մեռեալ, պիղծ է մինչև ցերեկոյ»։ Զայնն այն եղև որոտումն երկնաւոր. զի թէ մի հատն բուսանի, վաղվաղակի և ապա ամենեցուն ակնկալութիւն է յարութեան։ Հոտ նեխոյն դարձաւ ի հոտ անուշութեան առ մեռեալն, և ի դուրս ելեալ կենդանի։ Եմուտ ձայնն ի գերեզմանն, կալաւ զձեռանէ մեռելոյն. զի ի մեռելոյ զգայութիւն ոչ ազդէ հնչումն ձայնի. զի նայեցին յաստուածային հրամանն՝ ձայնիւն լսել որք անդ էին, և յայտնի երևեցի ի նորա հրամանէն արտաքս գալ մեռելոյն։ Ըստ սովորութեան մարդկան ի բացուստ կացեալ ձայնիւ գոչէ, ընտելականաւն մատակարարէ, և ձայնին զօրութեամբն ի ձեռաց բանսարկուին վերածէ զհոգին՝ կապելով ընդ լուծեալ մարմնոյն, և զհողեղէն մասն ի հող դարձեալ, և զջուրն ի յաւիշտ, և հուրն ի հրանիւթն, և զօդն ի յօդն ցնդեալ. ոչ ձեռօք ստեղծագործէ կենդանի, որպէս զառաջինն, այլ սոսկ ձայնիւ անուամբ կոչէ, և սարսափմամբ արագապէս ելանէ։ Բեթանիա տուն հնազանդութեան, վասն զի Ղազար հնազանդէր մահու վասն Ադամայ, որ անկաւ ընդ իշխանութեամբ մահու։ Հնազանդէր մահ Յիսուսի յաղագս արարչական[1] զօրութեան, և ծառայապէս լսէր տէրունական ձայնին, և ընձեռէր զմեռեալն աստուածային հրամանատրութեանն։ Գայ Յիսուս ի

1 Յայլ օրին. արարչականութեան։

տուն հնազանդութեանն, որ զանհնազանդութիւն մարդկան ընդ հնազանդութեամբ Բանին Աստուծոյ միաւորէ, և հնազանդի աստուածախառն մարմնովն՝ հասարակաց Հօրն՝ փոխանակ անհնազանդութեանն Ադամայ, և ըստ աստուածութեան առնու բարեբանութիւն ընդ Հօր ի հրաբուն զօրացն։

« Ղազարէ, եկ արտաքս »։ [1] Բազում մեռեալք դնէին ի գերեզմանի, բայց միոյն պէտք էին կոչելոյ արտաքս. թէ առանց անուան ասացեալ էր ո՞ գիտէր ի մեռելոցն և գայր արտաքս [2]. վասն այսորիկ յանուանէ կոչէ, « Ղազարէ, ե՛կ արտաքս »։ Բազում Ղազարք էին անդ, իսկ ակնարկութիւն կամացն Յիսուսի զմինն կոչեաց, որ Մարթայի և Մարիամու եղբայրդ ես, զոր ես սիրեմ, վասն որոյ զիս աղաչելով կոչեցին, առ այժմ դու միայն եկ, քեւ այլոց յոյս լինի [3]։ Թէ ոչ յանուանէ կոչեալ էր՝ զօրութիւն ձայնին Քրիստոսի զամենայն գերեզմանս քակէր։ Ժամանակ է սերմանելոյ և ժամանակ հնձելոյ. դեռ եւս սերմանիք սերմանին, բոյսք բուսանին, պտուղք առոքանան, և մատուցանին միածնի Որդւոյն Աստուծոյ։ Նա և ոչ այլոյ անուամբ զմեռեալն կոչէ ի գերեզմանէն. որոյ գումարտակ մարգարէքն յանուն տեառն, և առաքեալքն յանուն Յիսուսի Քրիստոսի, այլ ինքն ազատիչխանական ձայնիւ հրամայէ՝ ե՛կ արտաքս։ Զի ուսցին կենդանի և զգայական գոլ հոգւոցն, և յոյժ հեռաւորք ի մարմնոյ հոգւոց, զմահու

1 Յայլ օրին. գիտեմ զի ի միտս ձեր կամիք հարցանել զիս, եթէ առ ինչ զՂազար յանուանէ ի գերեզմանէն կարդաց. խնդրելի է բանդ և ոչ զանց առնելի. է ինչ որ գոյութեան է, և է ինչ որ ըստ զօրութեան։... ըստ գոյութեան այս է։ Բազում մեռեալք։
2 Յայլ օրին. ո՛գիտէր թէ ո՛ր մեռեալ գայր արտաքս։
3 Յայլ օրին. ըստ զօրութեան այս է, « Հանցեն ջուրք զեռունս շնչոց կենդանեաց ըստ ազգի և ըստ նմանութեան »։ Բանն արդիւնագործեցաւ, և առանց անուանութեան եղեն ծննդականք, և զրիւ բազմութեանն ոչ կարէ արկանել ի համար։ Նոյն ձայն էր և առ գերեզմանին. եթէ ոչ յանուանէ։

լուծանէ զխշխանութիւն, և զըմբռնեալն ի նմանէ հանդերձ հոգւով և մարմնով կորզեալ վերածէ կենդանի. ըստ զօրութեան այնմ որ ասաց, «Հանցեն ջուրք զեռունս կենդանիս». որ ասաց և եղեն, նոյն ձայն էր առ գերեզմանին։

«Եւ մեռեալն ոտիւք կապեալովք և ձեռօք երիզապնդեալ, և երեսօք վարշամակապատ»[1]։ Ոչ քարշեաց և ոչ գնացոյց ըստ սովորութեանն մարդկան, վասն զի կապեալ էր կապանօք և պատեալ պատանօք. որպէս հրեշտակն զԱմբակում մարգարէ հացիւն և թանիւ զբոլոր կերակուր հնձողին՝ տարաւ ի Բաբելոն։ Արագ է բանն Աստուծոյ քան զհրեշտակս երկնից. ըստ արագութեանն առաւել հզօր. նա առեալ զվարսից զբոլոր մարմինն տանէր ընդ իւր. և Յիսուս սաստիկ ձայնիւն ոչ ի կատարն մերձեցաւ, այլ յական քթթելն էած զհոգին ի հեռաստանէ, և միաբանեաց ընդ լուծեալ մարմնոյն, և ընդաստոյց յանդընդային քնոյն առանց քայլափոխելոյ. ուր կամք տեառն կամեցան, վաղվաղակի անդ գտաւ։ Կըտաւեղէն կապարանն ոչ կարաց արգելուլ զտէրունական հրամանն. լուծանէր զիւր կարգն զաբարչին կամնն կատարելով, և մահ ծառայաբար տեառն հնազանդէր հրամանին։ Այսօր զառաջին մարդոյն կապանսն արձակէ յանիծից մահուն, և առաւելութիւն մեղացն ոչ բաւէ զտէրունեան արգելուլ զհրամանն. և յինքն զյանցանսն կորզէ, և որպէս զյանցաւոր, փոխանակ յանցաւորի մարդոյն պարտաւորի անպարտ, զպարտաւորն կացուցանէ առաջի Հօրն։

«Ասէ ցնոսա Յիսուս, լուծէ՛ք զդա և թողէ՛ք երթալ»։ Որ կապեցիքդ՝ լուծէ՛ք, և որ պատեցէքդ՝ քակեցէ՛ք, և որ պատատեցիքդ՝ կողոպտեցէ՛ք. մի՛ գարշիք, ոչ գոյ հոտ նեխոյ. մի՛ խորշիք ըստ օրինացն, չէ մեռեալ՝ այլ կենդանի է, տե-

1 Յայլ օրին. վարշամակաւ։

սէք ձերովք նշանօքդ, ծաներուք ձեռօք ձեր. զպատեալ բերանդ բացէք, և դուք ընդ այլ վկայսն վասն մահու դորա ամենեքեան վկայ լերուք յարութեանդ՝ զոր տեսէքդ։ Մի մրգով ճանաչի բոլոր պտուղ երկրի, մանաւոր առժամայն, և աւետիք առ յապայ։ Ընդէ՞ր հրամայէ նոցա լուծանել. զի անամօթք էին, և միշտ եղծանել ջանային զճշմարտութիւնն, վասն որոյ զձեռսն և զհոտոտելիսն կացուցանէ նոցա դատախազ և վկայ։ Ի նախնումն ՚ի բարերարութենէն լռէր Աստուած, վասն Ադամայ ի պատուիրանապահութենէն լըռելոյ, յերկրորդումն վասն Ղազարու քրիստոսասիրութեան նորոգէ ի գերեզմանաց անշնչութենէն, և ի մահազգեստ ծածկոյթ կտաւապատութենէն արձակէ։

« Բազումք ի հրէից որ եկեալ էին առ Մարիամեանսն, իբրև տեսին զոր արարն՝ հաւատացին ի նա »։ Ոմանք հաւատացին մեծասքանչ նըշանացն, թէև յետոյ ուրացան, որք զայլ սգաւորս եկեալ էին մխիթարել, զանձինս մխիթարէին անտրտում ուրախութեամբ, և այլոց աւետիս ի քաղաքն տարան։ Ոմանք գնացին առ փարիսեցիսն, և պատմեցին զոր արար Յիսուս։ Իսկ ոմանք որպէս ի դիւաց մոլեալք գնացին առ սադուկեցիսն և ասացին, թէ հաւատացին ի նա բազումք, արդ աճապարեցէք առ ի լռեցուցանել զնորասքանչ նշանացն զօրութիւն։ Ի տանն Մարիամու և Մարթայի ուտէ հացընթրիս, և յանդիման բազմի Ղազարոս ի գերեզմանէ յարուցեալ. ունի ընդ իւր զերիզապինդ կտաւն հաւատարիմ վկայ. զի ի ձեռն կերակրոյ և ըմպելոյ և գերեզմանական կտաւոյն, ճշմարիտ և հաւատարիմ յարութեանն հաւատասցեն Ղազարու։ Զմարիամու ընդունի զբարեպաշտութիւն. իւղոյն օծումն խոստովանի սպասաւորութիւն իւրոյ մահուն, և անմաքուր վարուցն լուացարան, և զհերն մեռեալն մարմնական վարուց, զարտասուսն ան-

մաքուր վարուցն Ջնջիչ, զոտոն Թորգք աչգք Թա֊նալ զժամանակս կենդանութեան, և զեւթներե֊կաւորս, որով յառաջ խաղան ամիսք և տարիք, յորս անսուրբ գնայր վարուք գործոց: Տէրն իւր մաքուր ոտիւքն սրբէր, զՄարիամ և զՄարթայ շնորհազարդէ հաւատով. զչորեքօրեայ մեռեալն ի գերեզմանէ ընդունի կենդանի:

Հայր գայ ի հաճութիւն, Որդի աղաչող, Հո֊գին սուրբ բարեխօս. յորժամ բոլոր պտուղ աշ֊խարհիս բովանդակեսցին առանց մեր կոչելոյ, ոտերն բոլոր էից հայրենի[1] սկզբնատիպ փառօքն և զօ֊րութեամբ արարող Հոգւոյն, և բազմութեամբ հրեշտակաց ձայնիւ անձեռագործ փողովն յերկիր եկեալ, աթոռք անկանին, ատեանք ուղղին, դըպ֊րութիւնք. հրաշիցն բանան, ձայնք կենդանեաց հնչեն, երկինք գալարին, լուսաւորք վայրգք թօ֊թափին, երկիր դղորդի, վէմք պատառին, գե֊րեզմանք աւարին, մեռեալք յառնեն, յայնժամ և Ղազարոս ընդ մեզ յարուցեալ տեսանի: Վե֊րինք և Ներքինք միաբանին, խառնքն որոշին, և համառօտքն սահմանին, կողմ արդարոցն վերա֊բերին[2] հանապազ ընդ տեառն լինելով ի վերայ անուշ օդոց անմահիցն, կակուղ և փափուկ գար֊շապարօք անմահական մարդոց ի պարս հրեշտա֊կաց[3] միաւորին: Ցորս լիցի ամենեցուն մեզ հա֊սանել, շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մե֊րոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

1 Յայլ օրին. առանց մեր կոչելով ինքնին ոտքն արարածոց հայ֊րենի:

2 Յայլ օրին. վերափոխին:

3 Յայլ օրին. գարշապարօք մարդիկ յանմահական պարս հրեշ֊տակաց միաբանին:

ՆՈՐԻՆ

Ի ՄԵԾԻ ԱՒՈՒՐ ԳԱԼՍՏԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

ՍԵՒԱԿՆԱՄՕՂ և մշտնջենաւոր աստուածային գըրութեամբն հասեալ ժամանեցաք յօրհնաբանութեան օրս, յորում զերկնագոյն բարեբանութիւնն ընդ տիեզերական հաւատացեալս համախմբեալ յիշատակեմք. և զաստուածաբանութիւն տղայոցն վերաձայնաբար ճառեմք. և զտիեզերական[1] անուամբ եկաւորութիւնն՝ բարեբանապէս Դաւթայ խոստովանիմք զարմ: իսկ մերակերպ ընութեանս ընդ արարչութեան[2] միաւորութիւն երեւելապէս հանդիպեցաք տեսակի. և զերկակի եկաւորութիւն գոչելով, զեկեալն և զգալոցն՝ արարչական[3] խոստովանիմք բացայայտութիւն. զոր և երանելի աւետարանիչքն աստուածաբանութեամբ՝ և հրաշալի և ըղձալի ընձեռեցին[4] եկեղեցւոյ գիւտ: Յորոց ոմն ասէ.

«Իբրեւ մօտ եղեն ի Բեթփագէ և ի Բեթանիա՝ մերձ ի լեառն Ձիթենեաց, առաքէ Յիսուս երկուս յաշակերտացն իւրոց և ասէ ցնոսա. երթայք ի գեղդ որ առաջի ձեր է. և իբրեւ մտանիցէք՝ գտանիցէք էշ կապեալ և յաւանակ ընդ նմին, լուծէք ածէք ինձ. և եթէ ոք ասասցէ ինչ ձեզ, ասասջի՛ք եթէ տեառն իւրեանց պիտոյ է, և վաղվաղակի առաքեսցէ զնոսա»:

Երուսաղէմ խաղաղութիւն թարգմանի. վասն զի անդ խաղաղանայր գրաւորական ժողովուրդն,

1 Մի օրին. զի եզական անուանք:
2 Մի օրին. ընդ յառաջնորդեան:
3 Մի օրին. հրաշափառ:
4 Մի օրին. ընդձեռեցին:

ի պատուիրանազանցութենէ քաւեալք ի ձեռն քահանայութեանն և զանազան կենդանեացն արեանցն հեղման՝ և առօրեայ և շաբաթօրեայ լուացմանցն։ Այսպէս և եկեղեցւոյ մօտ էր ճշմարիտ խաղաղութիւնն Յիսուս՝ որ մերձակայ մահուամբն հանդերձեալ էր զբազմաստուածութեանն վրդովմունս խաղաղացուցանել։ Եւ ի մերձենալն Յիսուսի ի չարչարանս, մերձենային հեթանոսք ի դատապարտութենէ յազատութիւն որդեգրութեանն[1]։ Արդ մօտ եղեն հեթանոսք յերկնային խաղաղութիւնն՝ յաղագս յերկնուստ իջելոյն և մարմնակից մարդկեղէն բնութիւնս եդելոյն. և մօտ էր Յիսուս խաղաղութիւնն եկեղեցւոյ՝ յաղագս մարգարէիցն նախագուշակութեան և տէրունական մահուանն, որ զմահու տիեզերաց բառնայր զիշխանութիւնն, և յարատեւակ աստուածային կենդանութեամբն՝[2] զանլուծանելի կեանս հաստատակաց ընդձեռէր. վասն զի խաղաղանայր մարդկային բնութիւնս յաղագս մարմնոյն՝ որ ընդ աստուածութեանն խաղաղացաւ[3] անանջատապէս։

« Եկին ի Բեթփագէ և ի Բեթանիա »։ Բեթփագէ՝ թարգմանի տուն ծնօտի, և Բեթանիա՝ տուն սգոյ և տուն հնազանդութեան. վասն այնորիկ տուն ծնօտի, զի ծնօտ բանաւոր բնութեան է սպասաւոր ի ձեռն շարժման, պատուիրանին պաշտօնեայ։ Ծնօտ առաջին մարդոյն՝ լուծանէր զինքն ի բանական[4] սպասաւորութենէն՝ պատուիրանազանցութեանն աղագաւ, և բոլոր մարմնեղէն տաճար թափուր ի բնակողէն մնայր. վասն որոյ լինի մարմնեղէն տուն Յիսուս, և երրեակ միութեանն յաւիտենական կայարան։ Եւ ծնօտ՝ յա-

1 Մի օրին. մերձենային յանդատապարտելի ազատութիւն որդեգրայես։

2 Մի օրին. և յանզրաւական աստուածային կենդանութիւն զանլուծանելի զկեանս։

3 Մի օրին. միաւորեցաւ։

4 Մի օրին. ի մարմնական։

զագս մարդկեղէն[1] ծնօտի զարարչեղէն վարդապետել զաստուածաբանութիւնն։ իսկ Բեթանիա՝ որ է տուն սգոյ. վասն զի տուն ուրախութեան էր առաջին մարդն յաղագս ի դէմս զտէրունեան[2] փչումն ընդունելոյ. որ պատուիրանազանցութեանն աղագաւ՝ վերադարձաւ առ փչողն, և անփառունակ և սգաւոր լինէր նախաստեղծին անձն։ Եւ տուն հնազանդութեան, զի անհնազանդեցելոյ մարմնեղէն և բանականի տանն արարչադիր աւանդիցն, լինի տուն՝ նորին ստեղծիչն, և հնազանդի Հօր բովանդակապէս, և պարաբառնայ զանհնազանդութիւն առաջին մարդոյն։

« Ցայնժամ առաքէ Յիսուս երկուս յաշակերտացն իւրոց »։ Զօրինաւորական և զհոգեւորական աւանդիցն ասէ. յորոց մին առաքելական և առաջին շնորհի[3], թէպէտ և ժամանակաւ զկնի. իսկ երկրորդն մարգարէութիւն կարգեցաւ ի Հոգւոյն սրբոյ, զի երկոցունց վկայութեամբք հաւատարմացուսցէ զտնօրէնութիւնն։ Եւ դարձեալ՝ եթէ միոյն գայթակղեսցի ոք, միւսոյն կանգնեսցի. և ի հաւատոց ցրտացեալքն զայս երկուս աւանդութիւնս միօք վերարկեսցեն, և աստուածային ջեռնուն սիրովն։ իսկ յաշակերտացն երկուս, վասն զի բազում ունելով Յիսուսի զաշակերտսն, զվերին ութաշտիճանեայ երկնագումար զպարսն՝ զոր մեծն Պաւղոս շարադասէ. հրեշտակք, հրեշտակապետք, աթոռք, տէրութիւնք, պետութիւնք, իշխանութիւնք, սերովբէք, քերովբէք։ իսկ մերասեռիցս, դատողութիւնք թագաւորութիւնք և այլ աստուածաշնորհ պարգեւք. յորոց որպէս ի բազում աշակերտաց զերկուսն առաքելով, զմարգարէութիւնն որ յառաջագոյն զմարմնաւորութիւնն գուշակէր ճշմարտապէս, և զառաքելութիւնն՝ զոր

1 Մի օրին. մարմնեղէն... արարչեղէն բերանն վարդապետել զաստուածաբանութիւն։

2 Մի օրին. զտէրունեանն։

3 Մի օրին. շնորհին։

հազարապետ ինքեան խորհրդոցն կացուցանելով, ասէ. «Երթայք ի գեղդ որ առաջի ձեր է»։ Զի տիեզերական բազմութիւն մարդկան՝ աստուածեղէն և ամենատես ակամն է որպէս գեւղ, յոր առաքէ զմարգարէականն յառաջ քան զիւր եկաղութիւնն, իսկ զառաքելականն՝ ի մերունակերպախառնութեանն [1]։ Ասէ, «Գտանէք էշ կապեալ»։ Է սա յանմաքուր կենդանեաց՝ որ է հրէից ժողովարանն. և էր մաքուր կենդանի և երկնային հօտապետին հօտ՝ ի տարբաւորութենէ [2] եղեալ անսուրբ կենդանի. իսկ կապեալն, ընդ բազմաստուածութեանն իշխանութեամբ. յորմէ լուծանէ առաքելական կոչմամբն։

Եւ ես կապեալ, զի ընդ օրինացն պահպանութեամբ կապեալ էին հրեայքն, ի կապարանէ արձակէ զնոսա յիւր աւետարանական վարդապետութիւնն՝ մարգարէական և առաքելական կոչմամբն։ Իսկ յաւանակ առ նմին, զհեթանոսաց ժողովարանն ասէ. զորս յանսուրբ վարուց և ի կռապաշտութենէն լուծանէ յիւր երկնաբեր շնորհն. զոր ոչ ընդ օրինացն կապով էր արկեալ, այլ արձակ և համարձակ թողլով զհաճոյս իւրաքանչիւր կատարել. և վասն այնորիկ նմանեցուցանեմք կատարելագոյն կենդանւոյն՝ զհրեայսն, և յաւանակին՝ զհեթանոսս։ Վասն զի որք կանխագոյն զաստուածեղէն բանն ընկալան՝ կատարելագոյնք են և առաջինք. և ըստ տարացուցի՝ «Որդի իմ անդրանիկ Իսրայէլ՝ ասէր, ցփարաւոն՝ և մեծն Պաւղոս։ փառք և պատիւ և խաղաղութիւն գործողացն զբարիս՝ նախ հրէի և ապա հեթանոսի»։

«Ածին, ասէ, զկենդանիսն և արկին զնոքօք ձորձս, և նստաւ ի վերայ նոցա»։ Ածել՝ զառաքելական և զմարգարէական կոչմանէն ասէ, որովք

1 Մի օրի. իսկ զառաքելական ի մերունակերպախառնութիւնս. առաքելով, ասէ։
2 Մի օրին. ի տպաւորութենէ։

խնդրեալ մերձեցոյց առ ինքն. իսկ ձորձոցն վերարկուին, զաւազանին մաքուր և զանապական զգեստն՝ զոր շնորհէ սուրբ Հոգին. զի զմարմինն անապական զգեստաւ սրբէ մաքրութեամբ [1], և զոգին լուսաւորէ փչմամբ, և լնու զմիտսն առնելով տեղի ինքեան հանգստեան միածնի Որդւոյն: Դարձեալ նստաւ ի վերայ նոցա. քանզի յերկաքանչիւրոց [2] կոչեցեալք ի հրէից և ի հեթանոսաց ի սուրբ եկեղեցի և յորդէգրութիւն երկնային Հօրն, ի հասարակաց մաքրագոյն վարս առաքինութեան նստի և հանգչի տիրապէս և աստուածաբար:

Իսկ նստելն ի վերայ անմաքուր կենդանեացն, վասն զի ոչ երկու ժողովարանք հրէից և հեթանոսաց մաքրութեամբ առ Աստուած մերձեցան. այլ մարմնացեալ Բանն վարդապետութեամբն կոչեաց, և չարչարանօք ելոյծ զյանցանսն, և մահուամբն ի մահուանէ ազատեալ արար իւր աթոռ, և նստաւ ի վերայ հասարակաց խորհրդոց, և դատի և դատիարակէ զբոլորից հոգի և զմարմին, և շնորհէ [3] իւրաքանչիւր բարւոք զխոտրելիսն և զընդունականսն: իսկ ձորձոցն վերարկեցելոց ի նոյն կենդանատեսակացն՝ յորոց վերայ նստի նմանեալն ճշմարտապէս յերկինս երկնից ի քրովբէական կառսն: Զորձս իմանալի է զառաքելական վարդապետութիւնն. զի անդ ի սրոբէական սրբութեանն նստի և հանգչի, իսկ աստ յառաքելական քարոզութեանն նստի և բազում հրաշակերտէ [4], և զերասանակ վարդապետութեանն ուղղէ յերկինս երկնից տիրապէս: Արդ հասարակաբար նստաւ միածինն յերկինս ի վերայ քերովբէից, և յերկրի ի նոսա [5] կենդանեաց. անդ արարչա-

1 Մի օրին. անապական զգեստու մաքրութեամբ և հոգին առաւաջին:
2 Մի օրին. յերկաքանչիւրեանց:
3 Մի օրին. տրոհէ:
4 Մի օրին. և բազում հրաշս կատարէ:
5 Մի օրին. ի նուաստ ի կենդանիս:

բար և համապատուապէս, աստ մերունակն աս-
տուածացեալ կերպիւ և անանջատելի ի Հօրէ,
բոլոր յերրորդութենէն, գոլով և անորիշ յերկ-
րէ: Բայց կատարելապէս նստելն ի վերայ կեն-
դանեաց առաւելութիւն սիրոյ է արարչին առ իւր
արարածս, յորմէ հարստահարեալ տէրունեան
կամքն՝ անխտրաբար կոչէ զամենայն մարդկեղէն[1]
բնութիւնս յինքեան անճառելի շնորհսն, և հանգչի
և բերկրի ի վերածնեալսն աւազանաւն եղբայ-
րապէս և հարազատաբար՝ յազգս եղբայրացելոյ
ընդ մեզ մարդկեղէն բնութեանն: իսկ ձիթա-
տանեայց լեառն՝ աստուածեղէն բնութեանն մար-
մնաւոր բնութեամբ նուաստանալն. վասն զի ձէթ
գիշերոյ է լուծիչ. այսպէս Բանն ի Հօրէ ի դուրս
եկեալ և ընդ մարմնոյ միաւորելով՝ արեգակնապէս
փայլեալ ելոյծ զբոլոր մարդկային բնութեանս զո-
գւոյն գիշեր: Եւ յեկաւորելն յԵրուսաղէմ՝ հա-
ւանելն է ի կամաւոր չարչարանսն. զի Երուսա-
ղէմ թարգմանի խաղաղութիւն. և խաղաղու-
թիւն՝ որ ի վեր է քան զամենայն մարգարէա-
կան և առաքելական շնորհս, որ պարգեւեցաւ մեզ
աստուածեղէն մահուամբն: Զի իջանելն յԵրու-
սաղէմ՝ վերատանել էր զմերասեռ տոհմս յաս-
տուածակերտ դրախտն. վասն զի դիմելն յԵրու-
սաղէմ, դիմել էր ի մահ. և մահուամբն ի մա-
հուանէ արձակէր զմահու արժանաւոր անձինս[2]:

իսկ զի՞նչ բազմութիւն ժողովրդեանն առաջոյ
և զկնի, և ձորձոցն սփռելն ի ճանապարհին:
Ժողովրդոցն առաջինք՝ հայրապետութիւնք, մար-
գարէութիւնք, քահանայութիւնք, դատողութիւնք,
թագաւորութիւնք, ծերոցն ատեանք, դպրացն և
փարիսեցւոցն կաճառք, և Յովհաննու կարապե-
տական կոչումն. նոքա ժողովուրդք՝ որք յառաջ
են քան զՔրիստոսի մարմնանալն: իսկ երանելի

1 Մի օրին. զամենայն բնութիւնս:
2 Մի օրին. և մահն ազատ ի մահուանէ արձակէր զմահու ըմ-
բռնեալսն:

առաքեալքն և մեծ վկայքն և վարդապետքն, և բովանդակ աւազանին նորածնունդքն[1] որ զկնի տնօրէնութեանն կոչեցան, ժողովուրդ որ զկնի։ Իսկ ձորձոցն ի ճանապարհին տարածանելն՝ հընազանդելն է աւետարանական վարդապետութեամբ բոլոր տիեզերաց՝ որք սփռեցին սիրով զսիրտս, և զճանապարհս յինքեան կազմեցին քառահոլով չորից աւետարանչացն՝ որովք, ի վերայ գնայ և հետեւի, և ողջախոհացն բերկրի ախորժակօք մերակերպունակ Էմմանուէլն։ Քանզի յօրինակացն մաքուր անձինք՝ դիտաւորելով զնորա մարմնատիպ եկաւորութիւն, ոչ սոսկ բանիւ խոստովանեցին, այլ նիւթեղէն տեսակ զգիր՝ որպէս ձորձս, և ի ժամանակի՝ որպէս ճանապարհ, տարածեցին պատմագրապէս. վասն զի ի հողեղէն բնութեանս կենդանակերպեցաք, և ի հողեղինէս զհոգեղէն զգեցաք պատկեր։

Բայց զոստս ի ծառոց տարածանել. զի ի սկզբանն և ի լինելութեանն՝ Բանն ի Հօրէ ճառեալ եղիցի լոյս, և ժողովեսցին ջուրք, և բըղխեսցէ երկիր զծաղիկս և զծառս, և բովանդակ գոյանայր արարածոյն քան զական քթթել, և

1 Մի օրինակն փոխանակ այսր հատուածի՝ աստի մինչև ցերրկին աստեղն, ունի այսպէս։ Որք զհետ անցաւորի մարդոյն զաղարքն հանդերձ ստովք առաջի սփռէ, զի զանապական և զանձնենց զառաջին զգեստն ընկալցի։ Զի՛նչ ժողովրդոցն բազմութիւն առաջի և զկնի։ Ժողովրդոցն բազմութիւն՝ 'ի Քրիստոսի հաւատացելոց ասէ. իսկ առաջի և զկնի՝ որ ի ժամանակի սքանչելագործութեանն ընդ որս տնօրինէր զարմանագործութեամբ մարմնապէս և առանց մեղաց. իսկ զկնի առաքելոցն քարոզք հրաւիրակ տիեզերաց և աւազանին նորածին մարդկան։ Բայց որ ի զանազան ժամանակս զմի քաղցրաձայնազոյն խոստովանին մարմնեղէն զգեցեալ բնութիւն, բոլորովին համագոյ Հօր և անանջատելի յերկնից իջեալ՝ միայն անմեկնելին ի ծոց Հօր, և ի վերայ քերովբէիցն բովանդակ աստուածութեամբն. և նստեալն մարմնաւորութեամբ և ի գիրկս կուսին աստուածացեալ մարմնովն և զարքականն կառսն լինել մարմնացեալ աստուածութեամբն. և աղաղակէին ասելով՝ «Օրհնեալ որ գայ յանուն տեառն»․ զմարմնեղէն զալուստն որ նախաքարոզ մարգարէականն տեսլեամբք յառաջ ձշգրտեալ մաքուր հարքն գուշակեցին բազմատեսակ ձևովք։

բովանդակ ծաղկաւէտանայր երկիր՝ ի գագաթունս բերելով պսակ թագազարդեալք։ Ի պատուիրանազանցութենէն նախահօրն՝ նոյն բանն յանմեկնելի ծոցոյ Հօր՝ հրամայէր ծաղկազարդ երկրի՝ գոլ փշաբեր. զորոյ զղջացեալ Հօր, զԲանն յիւրածին ծոցոյ՝ անանջատելի յինքենէ առաքէ։ Վասն զի ոչ բաւէ բնութիւնս՝ զբնութեանն տանել տեսութիւն, առնու զմեր կերպարանս, և կերպարանակից զմեր բնութիւնս ինքեան առնէ ըստ շնորհի. և մերունակ բնութեամբս ընդ մահու պատերազմեալ մահու չափ, զմահու կամեցաւ բառնալ զիշխանութիւն. և զերկիր և զտարերս յառաջին նորոգէր հրաշափառութիւն։ Եւ զայս ոչ վայրապար, այլ ի ժամանակին՝ յորում պատուհասակիրն եղանիւր մարդն, և երկրի բարեվայելչութիւնն՝ որ մարդոյն աղագաւ էր կազմեալ. ի նոյն ժամանակի ի գարնանային հասարակութեանս՝ յորում լինելութեան երկրիս գոլ սկիզբն. ի նոյն հասարակաւորութեանն գայ և վերադարձուցանէ զերկիր յառաջին կարգս։ Վասն որոյ ծերք և տղայք ոստս ի ծառոց ի ճանապարհէն տարածանելով տերևազգեստ և ծաղկազարդս. որովք նշանակէին զանէծս երկրի հանդերձ փշաբերութեամբն պարաբառնալ, և յառաջին աստուածակերտ բուրաստանատեսակն յեղանակել։

Դարձեալ ոստս ի ծառոց տարածանել. վասն զի ի ձեռն առաջին տնկոյն յոստոցն ընկալաք ըզպատուիրանազանցութեանն պտուղ, յորոյ սակս զնոյն ոստս տարածանել ի ճանապարհի, զի գընալով ի վերայ ոտիցն Յիսուսի, ընդ ոտիւք մեզ զհակառակամարտին արկցէ զօրութիւն։ Իսկ ըստ իմանալի տեսակի, ծառ է հրեշտակական զօրութիւնքն՝ որք ի բանական և ի հոգեւոր բնութիւնս զատեալ որոշեցան բարձրակայ վայրիւք, յորս եւս վերածայրեալք սերովբէիցն բարձրութիւնք, որ ի ներքոյ տէրունական ոտիցն սոսկացեալ՝ քառունակ թեւօք պարփակեալ զինքն՝ ան-

կարողացեալ զտեսութիւնն բերել ի կիզմանէ, սարսափելով զյաղթական և զպանծալի սրբասացութեանն անհատաբար գոչելով։ Յայսպիսի բարձրագոյն ոստոց հատեալ՝ ի բարբառոց բարեբանութեան մանկանցն որ տարածանէին գոչմամբ զեկաւորութեան զհետեւմունս և զհանդերձեալ գալուստն, որ աղաղակէին ասելով. «Օրհնեա՜լ որ գաս յանուն տեառն» **։

Ընդ որս և համարձակախօսն Զաքարիաս ճշգըրտաբանէ զկուսին զյղութիւնն յանզուգակցութենէն, և զծնեալ մանուկն՝ ընդ մեզ Աստուած. և զհանդերձեալ աւուրս յԵրուսաղէմ եկաւորեալ և ի վերայ նստեալ կենդանեաց ոչ առակախօսէր՝ այլ յայտնապէս ասելով. «Զուարճացի՛ր, դուստր Սիոնի, վասն զի քո թագաւոր գայ առ քեզ, Աստուած ի վերայ նստեալ անմաքուր կենդանեաց»։ [1] Է՞ր սակս Սիոն և ոչ մեծն Երուսաղէմ ասի ուրախանալ։ Սիոն էր ամրոց, յորժամ Դաւիթ թագաւորեաց ի Հրէաստանի՝ եկեալ յԵրուսաղէմ և արգելեալ յեբուսացւոցն՝ զի մի՛ թագաւորանիստ լիցի Երուսաղէմ. իսկ Դաւիթ պատերազմեալ առնու զամրագոյն տեղին զկոչեալն Սիոն. և շինեալ զամրոցն ինքեան տուն և տեղի յարքունական, անդ վերստին Նորոգէ զսեղանն ի Սելովայ զկործանեալն. անդ և զտապանակն դարձուցեալ՝ ի գերութենէն հանէր, բովանդակ զքահանայական կարգն հանդերձ սպանդիւքն Նորոգէր։ Եւ վասն զի անճառելի ծոցոյ Հօր անմեկնելի Բանն մերունակ տպաւորեալ կերպիւ՝ ի կուսէ անապական և ի զաւակէ Դաւթի մաքուր բերանով խոստովանեալ՝ և զհայրենի լուծեալ թագաւորութիւն Դաւթի որդեգրապէս Նորոգէ, և արարող խաղաղութեան Յիսուս՝ ինքեամբ բերանով զխաղաղութիւն տիեզերական փրկութեամբ. զի ի պասեքին ոչ այլ ուրեք՝ այլ ի Սիոն հրամայէ

1 Ի միւսում օրինակի, աստի մինչև յկրկին աստեղսն պակասէ։

առնել զզատիկն։ Անդ և զգառնն ուտէ, անդ պարփակեալ դրօշքն էր՝ և ի յաշակերտացն ի մեղուէ ճաշակէ, և զնոր արքայութիւն՝ որ է իւր յարութիւն՝ հաւատարմացուցանէր ընդ նոսին ճաշակմամբ. վասն այսր ամենայնի հրամայէ ուրախանալ դստեր Սիոնի։ Իսկ դուստր Սիոնի, վասն զի քաղաք Դաւթի Սիոն կոչեցաւ; և քաղաք զծննդականի ունի զբնութիւն. որպէս արհեստական բնութեան՝ Յովսէփ Դաւթի է զարմ, և Յիսուս որդի Դաւթի խոստովանեցաւ, այսպէս և Սիոն։ Բնակիչք ժամանակիս դուստր են առաջին բնակչացն։

Բայց ըստ իմանալի տեսութեան, դուստր Սիոնի անուանի դուստր խաղաղութեան, զի զճշմարիտ խաղաղութիւնն բերեալ յերկնուստ տէրն՝ տայ սրբոց առաքելոցն ասելով. «Զխաղաղութիւն զիմ տամ ձեզ» և զանճառելի զխաղաղութիւն. զոր ընկալեալ աշակերտացն՝ առնուն ի Սիոնէ զփըչումն, զոր առաջին մարդն արտաքս անմաքրութեամբ տարաւ։ Ի Սիոն վերնատանն փակելովք դրովք երեւեալ փչէ յառաքեալսն ասելով. «Ընկալարո՛ւք զմաքուր Հոգին»։ Այսպէս և ի պենտէկոստէին ի Սիոն և ի վերնատանն ի շնչմանէ ի շառաչմանէ տրոհեալ լեզուք, առաքելոցն՝ զկոչումն ազգաց ի ձեռն նոցա նշանակէր լեզուօքն հրեղինօք։ Եւ ճշմարտապէս ի Սիոնէ ընկալան զխաղաղութիւն՝ և ի բազմաստուած վրդովմանցն զտիեզերս խաղաղացուցին, և ընդ արարածս զարարիչն Հայր հաշտեցուցին, զհիմնաւորութիւն եկեղեցւոյ ի նոյն Սիոն սկզբնաւորեցին։ Յաղագս այսպիսի նորագործ հրաշից հրամայէ մարգարէն՝ նախ քան զամենեցուն Սիոնի խնդալ։

Իսկ դուստր Սիոնի՝ ծնունդ և պտուղ այսպիսի չնորհաց, որ է եկեղեցի. վասն զի առաքելական վարդապետութիւն ի Սիոն առ սկիզբն. սա է մայր Սիոն և անդ մարդ ծնաւ. մարդ աւազանաւն յորդեգրութիւն երկնաւոր Հօրն. վասն այ-

սորին մայր Սիոն և դուստր Սիոնի յառաջատեսիլ. ի Սիոնէ առաքելոցն զհեթանոսաց կոչումն, և յառաջին սքանչելեացն որ ի Սիոնէ երկրորդփոխեցաւ ի հեթանոս յեկեղեցի**։

Արդ ուրախանալ դստեր Սիոնի հրամայէ՝ որ է տիեզերական եկեղեցւոյ կոչումն. իսկ թագաւորն Յիսուս, որ թագաւորէ ըստ արարչական զօրութեանն երկնի և երկրի, թագաւոր է ըստ մարմնոյ զոր ընդ արարչական բնութեան միացոյց. և գալ՝ զդիմեցումն չարչարանացն ասէ. և յանմաքուր նստեալ կենդանիս՝ զհրէից և զհեթանոսաց զանմաքրութիւն սրբէ իւրով մահուամբ։ Իսկ ի վերայ նստեալ տաճարացուցանէ սրբութեամբ զհաւատացելոցն միտս ինքեան՝ անորոշելի յերրորդութենէն։ Ասէ. «կապեսցէ զորթոյ զէշ իւր»։ Որթ զինքն խոստովանի ասելով. «Ես եմ որթն ճշմարիտ». և էշ՝ զհրէից զհաւատացեալսն, զորս կապեաց ընդ ինքեան[1]. զորպիսի կապ ոչ կարացեն փորձութիւնք աշխարհիս լուծանել։

«Եւ զորթոյն գնդակէ զյաւանակ իւր»։ Յաւանակ՝ զսուրբ եկեղեցի ասէ, և գնդակ որթոյ՝ զերանելի առաքեալսն. զի որթն Յիսուս կապեաց ընդ իւր հրաշագործութեամբ զհրէից անմաքրութիւնն, հպելով առ ամենայն ախտաժէտս բժշկապէս. իսկ գնդակ որթոյ՝ երկոտասան առաքեալքն, որք որպէս գնդակ յորթոյ, ծնան ի նորա վարդապետութենէն. վասն զի զհեթանոսաց կոչումն յաւիտենական կապեաց ընդ առաքելական վարդապետութեանն[2]։ Եւ բազմութիւն ժողովրդոցն ասէին. «Օրհնեալ որ գաս յանուն տեառն»։[3] Մովսէս և մարգարէքն զայսպիսի եկաւորութիւն փրկչին կանխաւ գուշակեցին. և քահանայութիւն

1 Մի օրին. յինքեան, որպիսի՞ կապ ոչ կարացին կենցաղոյ փորձութիւնք լուծանել։

2 Մի օրին. ընդ առակախօս վարդապետութեան իւրոյ։

3 Այս հատուած մինչև ցկրկին ատեղն ի միում օրինակի պակասէ։

մինչ ընթեռնոյր և ՚ի նոյին աստուածեղէն գալըս-
տեան. վասն զի զտղայսն աստուածաբան՝ սուրբ
Հոգին արար, և որպէս մատամբ ցուցանելով,
եթէ որ գալոցն էր՝ դա է, և որում ակն ունիք
միւսանգամ, զի եկեալ կոչեսցէ յանապական և
յանճառելի Երրորդութեան շնորհս։ Եւ գայ դա-
տել զտիեզերս և ըստ գործոց հատուցանել վարձս։
Իսկ քահանայապետքն և դպիրք ի նախանձուէ
նսեմացեալք՝ ոչ կճշմարտութիւնն անսուտ արեգա-
կանն [1] կարողացան տեսանել. զի միտք և բերք
առհասարակ եղեն անտեսք, այլ և բարբառոյ տը-
ղայոցն համրացեալք՝ մատուցեալ առ Յիսուս ա-
սէին. «Մատեան ժողովրդեանդ զի լսեսցեն. և
նաասէ. զի եթէ զդոսա լռեցուցից, քարինքդ
աղաղակեսցեն»։ Քարինք զանպտղութեան ունէին
զբնութիւն և զամլութեան. այսպէս և հեթանոսք,
որպէս և զնոյն տեսակ քարացեալ սրտիւք՝ ան-
պտուղ և անբոյսք էին յաստուածային բարեպաշ-
տութենէն. որք հանդերձեալ էին ի ձեռն առա-
քելական քարոզութեանն խոստովանել զաստուա-
ծութիւն նորա։

Դարձեալ քարինքդ աղաղակեսցեն. զնոյն ինքն
զքահանայիցն ասէր՝ ոյք դեռ ևս ոչ էին ընդ ա-
ռաքելոցն անկեալ վարդապետութեամբ, և անպը-
տուղք ի հաւատս, որք հանդերձեալ էին զաշա-
կերտացն վերաձայնել բարեբանումն. Նիկոդիմոս
և Կայիափա և Պաւղոս և եւթանքն ստեփանեանք,
և հազարաց բազմութիւնքն, որք զկնի յարու-
թեանն՝ առաքելոցն դարձան քարոզութեամբ։ Եւ
ևս քարինքդ աղաղակեսցեն։ Քարինք ի շինուածս
տրամադրեն ի հիմունս, և զբոլոր շինուածն ի
վերայ ինքեանց բերեն անշարժապէս. այսպէս և
երանելի առաքեալքն տրամադրեցան ի հիմունս
եկեղեցւոյ կարծր և անշարժելի իւրեանց հաւա-
տովն. յորոց վերայ շարադրեցաւ եկեղեցւոյ պա-

1 Մի օրէն. ոչ զճշմարտութիւնն և զանսուտ արեգական։

րակարգութիւն[1]. ըստ որում Պետրոս վէմ դաւանեցաւ յաստուածային բերանոյն՝ խոստովանելով զՔրիստոս ի Հօրէ իջեալ անորոշապէս։ Այսպէս և որք ի գրաւորականին՝ քարինս կոչէ զմարգարէութիւնս և զքահանայութիւնս. վասն զի ասէ. «Քարինք սուրբք հոլովին յերկրի նորա»։ Հոլովել՝ զկոչումն աստուածեղէն հրամանին ասէ, ի քահանայութիւն, ի դատաւորութիւն, ի թագաւորութիւն. զի երանելի առաքելոցն քարոզութիւն և կոչման[2] ձայնք, ընդ ամենայն երկիր հասին բարբառով աւետարանութեան, և ի տիեզերս ժամանեցին նոցուն բանքն ի փրկութիւն։ Արդ եթէ մանկտիդ լռեսցեն, Պետրոս վէմն՝ հանդերձ առաքելովքն աղաղակեսցէ զՈրդւոյ զեկաւորութիւնն մարմնապէս և աստուածաբար անանջատելի ի Հօրէ, բովանդակ ի յերկրի և բոլորովին յերկինս. ընդ Հօր լնու զքերոբէական աթոռն՝ և ի վերայ անմաքուր կենդանեաց նստելով մտանէ յԵրուսաղէմ. անդ ի սերովբէից զմաքուր և զարարչականն ընդունի աստուածավայելուչ գովասանութիւն, և աստ ի տղայոց՝ ի մտանելն աստուածապէս և մերունակ կերպիւ խնամակալութեամբ[3] ընդունի. անդ իմանալի տեսութեամբ, և բոլոր աստուածութեամբ սերովբէիցն երեւի. աստ զգալի բնութեամբ շօշափի. և է ամենայն յամենայնի և լնու զամենայն պարս ոլորտապէս. որոյ երկին թզաւ և երկիր քլաւ**։

[4] Եւ եւս քարինքդ աղաղակեսցեն. վասն զի միշտ ի հայրապետութիւն պանծային Աբրահամու գործոցն. որոց ի սակս մեր յանդիմանելով ասէր.

1 Մի օրին. դասեցաւ եկեղեցւոյ շարագրութիւնն։
2 Մի օրին. նոցունց ձայնք։
3 Մի օրին. վկայութեամբ։
4 Աստէն յաւելու մի օրինակն և զայս ինչ. Որպիսի՞ տեղի յոր փոփոխեսցի որդի անճառելով ի մարմինն. և զերեւելն մերոյ փրկութեանս աղագաւ, զեղջն խոստովանին մարդոյ անձինք. և ըննուաստութեան սակս եկեղեցւոյն ի վերուստ՝ խոստովանեսցին հոգեկրացն անձինք։

«Մի՛ սուկ պարծիք, Աբրահամու անմնմանողք, նորուն գործոց նահապետին. ասեմ ձեզ, ասէ, կարող է Աստուած ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու»։ Որպէս յանծնունդ յորովայնէ ծնաւ իսահակ՝ յորմէ դուք, այսպէս և յանհաւատ և յանծնունդ ժողովրդենէ հեթանոսաց՝ կարողացի իմ տէրութիւն մանկունս հաւատոյ ծնանել Աբրահամու, որք զիմն աղաղակեսցեն եկաւորութիւն մարմնապէս և աստուածաբար, «Օրհնեալ որ գաստ յանուն տեառն»։

Իսկ մեր զաստուածավայելուչ տօնեալ աւուրս կնքեսցուք զբանս. ընդ տղայոն աստուածաբանեսցուք գոչելով զսարսափելի զարարչական բարեբանութիւնս[1]. և ընդ աշակերտսն սպասաւորեսցուք տէրունական եկաւորութեանն. ընդ ժողովրդեանն բազմութեան զգեստս և զուռս զետեղեսցելոցն յերկրի արարչականին սփռեսցուք ոտիցն. զի ամենայնիւ և ընդ ամենեսեան հաղորդեսցուք աստուածապէս և մարմնաւոր անբաժանելի առանձնաւորութեանն Քրիստոսի, և անորիշ և համապատիւ սրբոյ Երրորդութեանն. որում գովութիւն և մեծվայելչութիւն և փառաւորութիւն ի մերոցս խոստովանեսցուք բերանովք[2]. զանորոշելի և զանմեկնելի զմի աստուածութիւն և զերիս անձնաւորութիւն բաժանեալ առանձնաւորութեամբ և միաւորեալ աստուածութեամբ. զի[3] նորա է պատիւ փառք և զօրութիւն յաւիտեանս. ամէն։

1 Մի օրէն. փառաբանութիւն։

2 Մի օրէն. բերանովս զանմեկնելի եւ զանորոշելի աստուածութիւն, հանդերձ գովասանական երգով օրհնեսցուք բարեբանեսցուք բարեհամբաւեսցուք։

3 Մի օրէն. որում սարսափելի պատիւ և գոհութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՆՈՐԻՆ

ՅԱՂԱԳՍ ԵԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՓՐԿՉԻՆ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

ԶԲԱԶՈՒՄՍ *թողլով Էմմանուէլի զսքանչելագործութիւնս, յերկնեան և ի սերկեանս փութացուք բացայայտութիւնս հրաշից. և զերկպքանչիւրոցն զարմանագործութիւնս ի պատմագով ասպարիսին հանդիսայայտել զքաջայայտ առաւելութիւնս. քանզի նախագործեալ աստուածեղէն և նախագործ հրաշս, երէկ*[1] *զխոստովանեալ եկաւորութիւնն ի Բեթանիա կատարէ, և զյառաջաճառեալ զՂազարու յարութիւնն գայ ի լնուլ. իսկ այսօր մտանէ յԵրուսաղէմ, նստեալ ի վերայ յաւանակի՝ զմարգարէական նախնագուշակումն հաւատարմացուցանելով։ Երէկ զՄարիամ և զՄարթա շնորհազարդէ*[2] *հաւատով. զչորեքօրեայ մեռեալն ի գերեզմանէն ընդունի կենդանի, այսօր զաշակերտսն և զտղայսն սրբէ աստուածաբար*[3] *և զեկսն ի փրկութիւն բոլորից մանկանցն փայլէ բարեբանութեամբ։ Երէկ զմահու լուծանէ զիշխանութիւն՝ և զըմբռնեալն ի նմանէն հանդերձ շնչով և մարմնով կորզեալ վերածէ ի կենդանութիւն. այսօր զհեթանոսս և զհրեայս լուծանէ ի հակառակամարտին ծառայութենէ՝ և նստի ի վերայ վարդապետութեամբ, և ուղղէ ի խաղաղութիւն զերասանակն նշանակաւ՝ երկուց կենդանեաց նստելով ի վերայ մտանէ յԵրուսաղէմ։ Երէկ զՂազարոս երիզապնդեալ ոտիւք ձայնէ արտաքս, և կըտաւեղէն կապարանն անկարացեալ արգելուլ զտէրունեան հրամանն, լուծանէր զիւր կարգն՝ ողջ*

1 Բնագիրն աստ և զկնի՝ երեկ։
2 Մի օրին. շնորհափառէ։
3 Մի օրին. զաստուածաբանէ։

զինքեան արարչին պահելով զհրամանն, և մահու ծառայակցէր՝ արարչական հնազանդելով հրամանին. այսօր զառաջին մարդն ի կապարանէն արձակէ յանիծիցն, և առաւելութիւն յանցանացն ոչ բաւէ զտէրունեանն արգելուլ զհրամանն. և յինքն զյանցուածն կորզէր որպէս զյանցաւոր, և փոխանակ յանցաւորի մարդոյն դատապարտի. անպարտն զպարտաւորն առաջի ինքեան կացուցանէր Հօրն։

Ցանցելուածն աւուրն զգայութեանցն կենագործէ զմեռելութիւն, և զվարչամակեայ պատառէ զկապն, և լուծանէ յերիզապնդէ չղթայիցն զձեռսն, և զարարչականն ծանուցանէ զօրութիւն. և զհողեղէն մասն ի հող դարձուցեալ՝ ոչ ձեռաք իբրև զառաջինն կենդանաստեղծու, այլ սոսկ ձայնելով անուանակոչութեան և սարսափմամբ արագապէս զելսն կատարէ։ Իսկ ի սերկեան աւուրս զտիեզերաց զկոչումն ընդ փարիսեցիսն և ընդ սադուկեցիսն ճառեալ ասէր. եթէ տղայքդ լռեն՝ զօրհնաբանումն քարինքդ աղաղակեսցեն. որով նշանակէ զանպտուղ հեթանոսաց պտղաւետեալ բարեպաշտութեանն զհաւատս։ Ցերեկւոջ աւուրն ի Բեթանիա՝ որ է տուն չարչարանաց և տուն հնազանդութեան։ Տուն չարչարանաց՝ յաղագս նորընջելոյն Ղազարու բարեկամի. վասն որոյ և արտասուաթորէր յաչաց արարչին՝ բոլոր մարդկեղէնս կարեկցեալ բնութեանս՝ բարեկամապէս և ազգակցաբար բերեալ լինի։ Իսկ տուն հնազանդութեան՝ վասն զի հնազանդէր Ղազարոս մահու՝ յաղագս նախահօրն ընդ մահու անկեալ իշխանութեան, և հնազանդէր մահ Յիսուսի յաղագս արարչական զօրութեան. ծառայապէս լսէր տէրունեան հրամանին և ընդձեռէր զմեռեալն աստուածային հրամանատրութեան. իսկ այսօր գայ յԵրուսաղէմ յիւր չարչարանաց տունն. վասն զի անդ հանդերձեալ էր չարչարանօք՝ ի չարչարանաց զմարդկայինս ազատել զբնութիւնս. և ի տուն

հնազանդութեան գայ՝ որ զանհնազանդ մարդկեղէնբնութիւնս[1] ընդ հնազանդի Բանին միաւորէ. եւ հնազանդի փոխանակ անհնազանդելոյ առաջին մարդոյն՝ իւրում Հօրն. վասն զի ըստ մարմնոյն հնազանդէր ծառայակերպ տեսակաւ հաւասարակաց Հօրն. իսկ ըստ աստուածութեանն ընդունէր ըզբարեպաշտութիւնս արարչապէս ընդ Հօր համապատուաբար:

Ի գնացելում աւուրն ի տան Մարիամայ եւ Մարթայի ուտէր ընթրիս, եւ յանդիման բազմի Ղազարոս ի գերեզմանէն յարուցեալ. ունի ընդ իւր զերիզապինդ կտաւն հաւատարիմ վկայ, զի ի ձեռն կերակրոյն եւ ըմպելւոյն եւ գերեզմանական կտաւոյն ճշմարիտ եւ հաւատարիմ յարութեանն հաւատասցեն Ղազարու: Իսկ ի հանդիպելում աւուրս դղրդեցուցանէ զբոլորն Երուսաղէմ ի պասեքատօնին[2] մտանելով ի սա, եւ ի նորեկաց ժողովրդոցն փորձեալ ստուգէր Յիսուս ի Նազարեթէ գալիլեացւոց. որոց խոստովանութիւնն համաբանի ընդ հրեշտակին[3] երեւելով հովուացն ի Բեթղահեմ:

Ի գնացելում աւուրն զՄարիամայ ընդունի զբարեպաշտութիւնն, զպատուական իւղոյն օծումն խոստովանի սպասաւորութիւն իւրոյ մահու, ի չարչարանացն գործակցութիւն: Զարտասուսն անմաքուր վարուցն լուացարան. հերն զմեռելութիւն ի մարմնեղէն վարուցն. եւ զոտսն ոտիւք ընթանալ զժամանակս կենդանութեան, եւ զեւթներեակ աւուրցն որովք յառաջ մատեան ամիսք եւ տարիք, յորս անսուրբ հետեւանայր գործովք իւրովք՝ մաքուր ոտիւքն սրբէր: Իսկ ի հանդեր-

1 Այլ օրինակ. եւ հնազանդի աստուածախառն մարմնով համաբանակից հօրն փոխանակ անհնազանդութեանն Ադամայ, եւ ըստ աստուածութեանն առնու բարեբանութիւն ընդ հօր ի հրաշոյն զօրաց:

2 Մի օրին. ի պասեքայ տօնին:

3 Մի օրին. միաբանեալ հովուացն ի Բեթղեհեմ ընդ հրեշտակին:

ձեղում աւուրս զքահանայիցն կատարէ ախորժակս. գայ յայտնապէս աշակերտացն բազմութեամբ, սրէ զլեզուս մանկանցն յօրհնաբանութիւն. ազդէ ի միտս ժողովրդոցն և զտնկոցն ի ճանապարհին տարածանել՝ որք են աստուածային և թագաւորական սպասաւորութիւն. վասն զի երկու սքանչելագործութիւնք յերկուս կատարեալ աւուրս գործեցան՝ յանգործականիս և ի սկըզբնականիս [1]. և ըստ լինելութեան յանգործականի՝ սկզբնականին շաբաթ որ է հանգիստ. և ութներեակ միաշաբաթուն՝ որ է սկիզբն. քանզի ի դատարկարանին գործէ աստուած հրաշափառ ի մեռելութենէն յարութիւն բանական բնութեանս. զի նախ ի լինելութեանն դադարումն լինէր յեւթներորդումն աւուրն. և զի բոլոր արարչակերտագործութիւնքն բարի են, Մովսէս խոստովանի. « Ահա զոր արար Աստուած, բարի է ». սակս զբարեգործականելն լռէր Աստուած. քանզի յառաջնմէ մինչև ի վեցերորդն՝ զերկին և զերկիր փառազարդեաց Աստուած. իսկ ի վեցերորդումն զմարդն իւրովն կենագործէ ձեռամբ, և օրէնս աւանդէր պահպանական։ Ի լռել մարդոյն զպատուիրանապահութիւնն՝ լռէր և Աստուած զբարեգործութիւնն, զի ի վեցերորդումն մարդն դադարէր յօրհնապահութենէն, և յեւթներորդումն արգելոյր Աստուած զբարեգործելն. և զայս ոչ վայրապար՝ այլ արարչական ճշմարտութեամբն. վասն զի երկինք և երկիր սակս մարդոյն՝ և մարդն վասն պատուիրանին։ Պատուիրանապահելն զաստուածեղէն բարերարութիւնն բացափայլէր. ի լռելն պատուիրանապահութեանն՝ լռէր և աստուածագործ հրաշքն. քանզի մերկանայր մարդն յարարչատուր փառացն յաղագս յանցմանն, և մեռանէր Ղազարոս երկրային և ժամանակաւոր մեռելութեամբն։ Անդ յաղագս նախահօրն պատուի-

1 Ի միում օրինակի չէք՝ յանգործականիս և ի սկզբնականիս։]

ընազանցութեանն՝ լուէր Աստուած զյանցանացն թողութիւն. աստ յաղագս Ղազարու աւանդապահի՝ երկասիրէր զկենագործելն ի գերեզմանէն։

Նմանապէս[1] շաբաթ առաջին և երկրորդ. ի նախնումն ի բարեգործութենէ լուէր Աստուած; նախահօրն պատուիրանապահութենէն լուելոյ աղագաւ. յերկրորդումն յաղագս Ղազարու քրիստոսասիրութեանն, նորոգէ ի գերեզմանական անշնչութենէն. և ի մահազգեաց պարածածուկ կտաւակապութենէն արձակէ։ Իսկ միաշաբաթն է բարեբանութեան օր. և աշակերտացն բազմութեան զեկսն յԵրուսաղէմ բարեբանելով ի վերայ անմաքուր նստելով կենդանեաց. ձորձոց և ոստոց ընդ ոտիւք տարածելովք մուտն յԵրուսաղէմ ահաւորապէս, դղրդիլն Երուսաղէմի ժողովրդովքն եկելովք, քահանայիցն ախտանալով զնախանձն՝ զի՞նչ զքէն աղաղակեն՝ ասելով ցտէրն։ Պատասխանի ետ տէրն. «Զի թէ մանկտիդ լռեն՝ քարինքդ աղաղակեսցեն»։

Միաշաբաթ է սկիզբն լինելութեան, զի անդուստ սկզբնաւորեալ երկնի և երկրի արարչագործութիւն։ Արդ[2] վասն զի առաջին աստուածավայելուչ ապականեցաւ իրագործութիւն յանցաւորութեամբ նախահօրն աղագաւ, զյանցաւորի առնու զկերպ, և որպէս զյանցաւորս տայ ի դատապարտութիւն զանձն. և որպէս թողացուցանէ դատողացն զինքն դատապարտել, զի զդատապարտութիւն առաջին մարդոյն գրաւականեսցէ. և մարդացեալն Աստուած պարտաւորութիւն ընդունի, և փոխանակ գրաւականի Հօրն ի մեղս՝ ի մարմինն աստուածացեալ և անյանց զմեղս ընդունի կամաւորաբար և յանցաւորապէս. և մարմնացեալ աստուածութեամբն զբոլոր յանցաւորութիւն լուծանէ զնախնի մարդոյն, անյանց զնա առաջի ինքեան կացուցանէ Հօրն **։

1 Մի օրին. Նոյնպէս։
2 Աստի մինչև ցկրկին աստեղան չէք ի միում օրինակին։

Եւ բազմութիւն աշակերտացն՝ նշանակէ զհանգերձեալ տիեզերական հաւատացելոց կոչումն. իսկ ձիթաստանեաց լեառն՝ ձէթ արեգական է գործակից. լեառնն՝ զաստուածեղէն վարդապետութեան զբարձրութիւն ասէ. ձէթ զլուսափայլ և զանէրունեան բերանն՝ որ արտաքոյ զաստուածախօսութիւնն ջահաւորէ: իսկ տունկս ընդ ոտիւք տարածանելն, երկիր ի փշաբեր անիծից յառաջին դառնալ ի ծաղկաւէտութիւն. և անկոցն վերահանդիսանալ հասակ ստեղն[1] վերածնութեամբ քաջապտուղ և բարեսաղարթ. զոր առեալ ժողովուրդն ընծայեցուցանէին անիծից բարձողին և նորոգչին զերկիր՝ յառաջին աստուածակերտութիւնն[2]: իսկ ձորձոցն տարածումն՝ զախտացեալն հոգւով և մարմնով որք հաւատով ի Քրիստոս մերձեալ բժշկեցան, նշանակէր. և քահանայիցն ախտանալ ընդ մանկանցն օրհնաբանութիւնս՝ զնորահաւատիցն արդելուլ զխոստովանութիւն, և առաքելական քարոզութեանցն ընդդիմամարտք զօրութեամբ:

Իսկ ասելն տեառն, « Եթէ դոքա լռեսցեն քարինքդ աղաղակեսցեն ». քարինք զերանելի առաքելոցն զկարծր և զհիմնադրական քարոզութիւնն ասէ. եթէ զմանկտիդ արգելից, Պաւղոս և Նիկոդիմոս և Գամաղիէլ և Կայիափայ՝ որք են տակաւին անպտուղք, և քարատեսակ ի հաւատս, և ի հրէութեան քաջ անպտուղք, սոքա զիմս խոստովանեսցեն զաստուածութիւնս մարդացեալ[3]. և զերկուս եկաւորութիւն քաջաձայնապէս բարբառելով՝ զառաջինն և զերկրորդն:

Եւ եւս քարինքդ աղաղակեսցեն՝ իմանալի է քարինք զմարգարէսն, որք յօրինեին հանդիսացան ի շինուածս, և ի նոցունց մարգարէական խոստովանութիւնք՝ որք զբովանդակ տնօրէնութիւնն

1 Մի օրին. հասակ ստեղն:
2 Մի օրին. հրաշակերտութիւնն:
3 Մի օրին. տակաւին անպտուղք, դոքա զիս խոստովանեսցին [illegible] աստուածացեալ:

գրոց Նախագուշակական [1] տառիւք՝ յիշատակ առյապայ եղելոցս անկապտելի Թողին գանձ. երկու հաւատարիմ վկայիւք՝ մարգարէական և աւետարանական աստուածխօսութեան գրովք։ Զի [2] և զտօնախմբողքս արժանի արասցէ Նոր արքայութեան. զի ՚նորա են փառք և զօրութիւն յաւիտեանս. ամէն։

1 Մի օրէն. տնօրէնութիւնն իւրեանց նախագծական։

2 Աստանօր մի օրինակն ունի հատուած մի երկայն յառաջին ճառէն, և աւարտ ճառիս առնէ քաղելով և օրինակելով զառաջնոյն զվերջաբանն։ Նոյնպէս և միւս օրինակն ունի այլ ինչ հատուած առաւել յառաջնոյ անտի, և վերջաբանէ ըստ օրինակիս զոր եդաք։